

PARLIAMENT
MONITORING

ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

7-րդ գոլթաբաժին | 2-րդ ՆԱՏԱՇՐՋԱՆ
2-րդ ՁԵԿՈՒՅՑ



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան



«ՄԱՆԴԱՏ» տեղեկատվական հասարակական կազմակերպություն

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

7-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄ | 2-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ
2-ՐԴ ՁԵԿՈՒՅՑ

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N 19943: Ձեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետներին և դիրքորոշումներին:

ՆԱԽԱԲԱՆ

«Մանդատ» ՀԿ-ն ներկայացնում է 7-րդ գումարման Ազգային ժողովի 2-րդ նստաշրջանի գործունեության դիտարկման արդյունքները: Ամփոփումը կազմվել է լրագրողական դիտարկումների, փորձագիտական վերլուծությունների և parliamentmonitoring.am կայքի վիճակագրական ծրագրի տվյալների համադրմամբ:

Դիտարկման առանցքում եղել է կառավարման խորհրդարանական համակարգում Ազգային ժողովի նոր լիազորությունների, օրենսդրական և վերահսկողական գործառույթների իրացման արդյունավետությունը:

Ամփոփվել են 7-րդ գումարման 2-րդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանի գործունեության ընդհանուր միտումներն ու ցուցանիշները, ներկայացվել են տվյալներ ԱԺ խմբակցությունների օրենսդրական նախաձեռնությունների, ակտիվության մասին:

Անդրադարձ է կատարվել ԱԺ վերահսկողական գործառույթին. վերլուծվել են պետական մարմինների հաշվետվությունների, զեկույցների, հաղորդումների ներկայացման և քննարկումների պրակտիկան, խորհրդարանում էթիկայի հանձնաժողովի ձևավորման, խորհրդարանական լսումների կազմակերպման իրավակարգավորման առանձնահատկությունները:

Հակիրճ ամփոփվել են նաև պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ԱԺ պատգամավորների ներկայացրած գույքի և եկամուտների հայտարարագրերի հիմնական տվյալները:


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

7-րդ գումարման Ազգային ժողով	6
<ul style="list-style-type: none">● ԱԺ գործունեությունը՝ թվերով● ԱԺ օրենսդրական գործունեություն. պրակտիկա և միտումներ	
ԱԺ վերահսկողությունը	24
<ul style="list-style-type: none">● Հաշվետվությունների, զեկույցների, հաղորդումների ներկայացման և քննարկումների պրակտիկան● Կառավարության ծրագրի կատարողականի քննարկումը՝ ԱԺ վերահսկողության նոր գործիք● Ինքնավար մարմինների ղեկավարների ընտրությունը● Սահմանադրական դատարանի դատավորի ընտրությունները● ԲԴԽ անդամների ընտրությունները	
Խորհրդարանական լսումներ. միտումներ և պրակտիկա	41
Էթիկա և շահերի բախում. ինստիտուտի չկայացման գործոնները	46
Հայտարարագրեր	54

7-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ, 2-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

2018թ. դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքներով ձևավորված 7-րդ գումարման Ազգային ժողովում ներկայացված է 3 քաղաքական ուժ՝ «Իմ քայլը» դաշինքը, «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» կուսակցությունները:

«Իմ քայլը» դաշինքը ստացել է ընտրողների ձայների 83.85%-ը, որի հիման վրա, ներառյալ Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար քվորտավորված պատգամավորական 4 մանդատները, խորհրդարանում ունի 88 պատգամավոր: Իբրև ելակետ ընդունելով «Իմ քայլ»-ի՝ մեծամասնություն ձևավորող մանդատների թիվը և ապահովելով խորհրդարանական ընդդիմության համար մանդատների նվազագույնը 1/3-ն ունենալու սահմանադրական պահանջի կատարումը՝ ԲՀԿ խմբակցությունը վերջնարդյունքում ստացել է 26, իսկ «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը՝ 18 մանդատ:



132

«Իմ քայլը» 88

«Լուսավոր Հայաստան» 18

«Բարգավաճ Հայաստան» 26

ԱԺ գործունեությունը՝ թվերով

7-րդ գումարման Ազգային ժողովի 2-րդ նստաշրջանը սկսվել է 2019թ. մարտի 5-ին և ավարտվել հունիսի 20-ին: Նստաշրջանի ընթացքում գումարվել է 6 հերթական և 4 արտահերթ նիստ, նստաշրջանի ավարտից հետո՝ 3 արտահերթ նստաշրջան: Բոլոր արտահերթերը հրավիրվել են կառավարության նախաձեռնությամբ:

2-րդ նստաշրջանում խորհրդարանն ընդունել է 143 օրենք, որոնցից 6-ը «մայր» օրենքներ են, 11-ը՝ օրենք-համաձայնագրեր, 137-ը՝ փոփոխություններ և լրացումներ գործող օրենքներում:

Օրենքներից 80-ն ընդունվել է հերթական, իսկ 63-ը արտահերթ նստաշրջանների ընթացքում:

Գրաֆիկ 2. Ընդունված օրենքների քանակը ըստ նստաշրջանների



Ընդունված օրենքներից 12-ի հեղինակը խորհրդարանն է. 8-ը ներկայացրել են պատգամավորները, 4-ը՝ խմբակցությունները: 131-ը կառավարության նախաձեռնություններն են:

Գրաֆիկ 3. Ընդունված օրենքները՝ ըստ հեղինակների




Ամբողջությամբ ընդունված օրենքներից 6-ը «Իմ քայլի», 2-ը՝ «Բարգավաճ Հայաստան»-ի, 4-ը՝ «Լուսավոր Հայաստան»-ի նախաձեռնություններն են:

Առաջին ընթերցմամբ ընդունվել և հաջորդ ստտաշրջանի օրակարգ է տեղափոխվել պատգամավորների ու խմբակցությունների հեղինակած 28 օրինագիծ: Դրանցից 14-ը «Իմ քայլի», 9-ը «Լուսավոր Հայաստանի», 5-ը ԲՀԿ-ի նախաձեռնություններն են:

Շրջանառության մեջ է ստտաշրջանի օրակարգ չընդգրկված 130 օրենքի¹ նախագիծ, որոնցից 59-ը պատգամավորների ու խմբակցությունների հեղինակած նախաձեռնություններն են: «Իմ քայլի» պատգամավորները շրջանառության մեջ են դրել 25, ԼՀ-ի և ԲՀ-ի պատգամավորները՝ 17-ական նախագիծ:

Ընդունված օրենքների գերակշիռ մասը վերաբերել է պետաիրավական (55) և տնտեսական (50) ոլորտներին:

Գրաֆիկ 4. Ընդունված օրենքները՝ ըստ ոլորտների



¹ Տվյալը ներառում է ԱԺ 2-րդ ստտաշրջանի ավարտի՝ հունիսի 20-ի դրությամբ շրջանառության մեջ դրված օրինագծերը:

2-րդ սստաշրջանի ընթացքում Ազգային ժողովն ընտրել է Բարձրագույն դատական խորհրդի 2 անդամ, Սահմանադրական դատարանի 1 դատավոր, նշանակել է Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 7, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 5 անդամ:

Լսել և ի գիտություն է ընդունել կառավարության՝ 2018թ-ին հավանության արժանացած ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցը, 2018թ. դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԿԸՀ հաղորդումը, 2018թ. գործունեության մասին, դատախազության, ՀՌՀ, Հաշվեքննիչ պալատի տարեկան հաղորդումները և ՄԻՊ տարեկան զեկույցը:

2-րդ սստաշրջանի ընթացքում խորհրդարանում ձևավորվել է 2 քննիչ հանձնաժողով՝ Արարատի և Արմավիրի մարզերում ջրային տնտեսության ծրագրերի իրականացման արդյունավետությունը և 2016թ. ապրիլին ծավալված ռազմական գործողությունների հանգամանքներն ուսումնասիրելու նպատակով:

Քվեարկությամբ մերժվել է 16 օրենսդրական փաթեթի ընդգրկումը 7-րդ գումարման 2-րդ սստաշրջանի օրակարգ:

Ուշագրավ փաստեր

- 7-րդ գումարման 2-րդ սստաշրջանի ընթացքում ընդունված օրենքների 9%-ը հեղինակել է խորհրդարանը, 91%-ը՝ կառավարությունը: Այս առումով օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև հարաբերակցությունը նախորդ գումարման խորհրդարանների համեմատությամբ փոփոխության չի ենթարկվել: Պատկերն այլ է ամբողջությամբ չընդունված օրինագծերի դեպքում. սստաշրջանի ընթացքում առաջին ընթերցմամբ ընդունված 29 օրինագծերից 28-ի հեղինակը պատգամավորներն են: Դրանք հաշվարկելու դեպքում օրենսդրական նախաձեռնությունների ԱԺ-կառավարություն տոկոսային հարաբերակցությունը 30/70 է:
- Ընդունված 143 օրենքների 44%-ը (63) ընդունվել է արտահերթ նիստ-սստաշրջանների ընթացքում:
- Քվեարկությամբ մերժվել է ընդդիմադիր խմբակցությունների 16 օրենսդրական նախաձեռնության ընդգրկումը 7-րդ գումարման 2-րդ սստաշրջանի օրակարգ: Գրանցվել է նաև կառավարության ներկայացրած նախագիծը մերժելու դեպք. խորհրդարանը քննարկել և քվեարկությամբ չի ընդունել «Փաստաբանության մասին» օրենքում կառավարության առաջարկած փոփոխությունների նախագիծը:
- 2-րդ սստաշրջանում խորհրդարանում անցկացվել է ՀՀ նախագահի կողմից առաջադրված ՍԴ դատավորի թեկնածուի 3 ընտրություն: 2 անգամ դատավոր չի ընտրվել:

3-րդ անգամ դատավոր է ընտրվել փաստաբան Վահե Գրիգորյանը, որի թեկնածությունը հանրապետության Նախագահի կողմից առաջադրվել և քվեարկությամբ մերժվել էր Նախորդ գումարման խորհրդարանում:

- Խորհրդարանում անցկացվել է ԲԴԽ անդամի թեկնածուի 3 ընտրություն՝ արտահերթ Նիստերի ռեժիմով, 10 օրվա ընթացքում: Մեծամասնության առաջադրած 3 թեկնածուներից 1-ը չի ընտրվել:
- Նստաշրջանի ընթացքում խորհրդարանը մերժել է վարչապետի կողմից ներկայացված ՏՄՊՊՅ մեկ անդամի թեկնածությունը: Ընտրվել են առաջադրված 5 թեկնածուներից 4-ը:
- Խորհրդարանական լսումներ հրավիրելու իրենց իրավունքը իրացրել են ԱԺ 11 մշտական հանձնաժողովներից միայն 4-ը: 1 լսում հրավիրվել է ԱԺ Նախագահի Նախաձեռնությամբ: ԱԺ 3 խմբակցությունները Նստաշրջանի ընթացքում լսումներ չեն հրավիրել:
- Առաջին անգամ խորհրդարանական մեծամասնության կողմից ԱԺ փակ հանդիպման է հրավիրվել Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը: Ընդհանուր առմամբ Նստաշրջանի ընթացքում խմբակցությունների հրավերով խորհրդարան է եկել 11 պաշտոնյա: Ամենաշատ հանդիպումներ կազմակերպել է «Իմ քայլը» խմբակցությունը՝ 9, 1-ական հանդիպում՝ «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» խմբակցությունները:
- Եվս 3 պաշտոնյա՝ արդարադատության Նախարարը, գլխավոր դատախազը, Մարդու իրավունքների պաշտպանը խորհրդարան են հրավիրվել մշտական հանձնաժողովների կողմից: Բարձրաստիճան պաշտոնյաներից միայն մեկը՝ ԲԴԽ Նախագահին է մերժել ԱԺ-ում հանդիպման հրավերը:
- Նստաշրջանի ընթացքում Եթիկայի ժամանակավոր հանձնաժողով չի ստեղծվել, կանոնակարգային ընթացակարգերով Եթիկական որևէ հարց չի քննարկվել, չնայած խորհրդարանում գրանցվել են պատգամավորի Եթիկայի կանոններին ու շահերի բախման խնդրին առնչվող դեպքեր:
- Նստաշրջանի ընթացքում խորհրդարանում ձևավորվել է 2 քննիչ հանձնաժողով՝ Արարատի ու Արմավիրի մարզերում ջրային տնտեսության ծրագրերի իրականացման արդյունավետությունը և 2016թ. ապրիլին ծավալված ռազմական գործողությունների հանգամանքներն ուսումնասիրելու նպատակով: 2 դեպքում էլ Նախաձեռնությունը եղել է «Իմ քայլը» խմբակցությանը:

- Նստաշրջանի ընթացքում ընդդիմադիր խմբակցությունները հանդես չեն եկել իրենց հեղինակած օրինագծերից որևէ մեկը արտահերթ համարելու և հերթական նիստում քննարկման առարկա դարձնելու նախաձեռնությամբ:
- Միայն «Լուսավոր Յայաստան» խմբակցությունն է օգտվել կառավարությանը հարցապնդում ներկայացնելու իրավունքից: Հարցապնդումը վերաբերել է կառավարության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում հնարավոր կադրային կրճատումներին ու ակնկալվող տնտեսումներին: Հարցապնդմանը տրված պարզաբանումները բավարար չհամարելով՝ խմբակցությունն օրենքի ուժով քվեարկության է ներկայացրել ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանի պաշտոնանկության հարցը վարչապետի առջև բարձրացնելու վերաբերյալ որոշման նախագիծը: Որոշումը չի ընդունվել:
- Եվրախնտեգրման հանձնաժողովը նստաշրջանի ընթացքում քննարկված որևէ հարցի համար գլխադասային չի համարվել:
- 2-րդ նստաշրջանի ընթացքում ամենաշատ «կողմ» քվեարկած պատգամավորը ԲՀԿ-ից Ջանիբեկ Յայրապետյանն է (176), ամենաշատ «դեմ» քվեարկածը՝ «Իմ քայլ»-ից Վահագն Հովակիմյանը (20), ամենաշատը «ձեռնպահ» է քվեարկել «Իմ քայլ»-ից Երջանիկ Հակոբյանը: Ամենաշատը բացակայել է ԲՀԿ-ից Վարդան Ղուկասյանը (125), ամենաշատը հարց տվել ու ելույթ է ունեցել ԲՀԿ-ից Միքայել Մելքումյանը (72)²:
- ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկյանը զիջել է տարիներ շարունակ զբաղեցրած ամենաշատ բացակայածների տասնյակի առաջին հորիզոնականը: Տասնյակը գլխավորում է ԲՀԿ խմբակցությունից Վարդան Ղուկասյանը, Գագիկ Ծառուկյանը այս տասնյակում 8-րդն է:
- «Իմ քայլը» խմբակցության պատգամավորները միասին նստաշրջանի ընթացքում հարց են տվել և ելույթ են ունեցել 450, ԲՀԿ-ականները՝ 227, «Լուսավոր Յայաստանը»՝ 144 անգամ: «Իմ քայլը» խմբակցության պատգամավորներից յուրաքանչյուրը միջինը հնչեցրել է 5, ԲՀԿ-ի և ԼՀԿ-ի պատգամավորներից յուրաքանչյուրը՝ 8-ական հարց ու ելույթ:

² Parliamentmonitoring.am-ի վիճակագրությունը մշակվում է ԱԺ պաշտոնական կայքէջի հրապարակային տվյալների հիման վրա: Բոլոր տվյալները պաշտոնական աղբյուրից վերցվում և մշակվում են հատուկ այս նպատակով ստեղծված համակարգչային ծրագրի միջոցով: Պատգամավորների հարցերի, ելույթների վիճակագրությունը կազմվում է միայն օրինագծերի քննարկումների և քվեարկությունների հիման վրա:

- 7-րդ գումարման ԱԺ-ում Էականորեն կրճատվել է «լուռ» պատգամավորների թիվը: Նստաշրջանի ընթացքում 132 պատգամավորից հարց չի տվել ու ելույթ չի ունեցել 22-ը կամ պատգամավորների ընդհանուր թվի մոտավորապես 15 տոկոսը, մինչդեռ նախորդ գումարման ընթացքում լուռ պատգամավորները կազմում էին խորհրդարանի գրեթե կեսը: Քննարկումներին չի մասնակցել «Իմ քայլը» խմբակցությունից 14, «Բարգավաճ Հայաստան»-ից՝ 7, «Լուսավոր Հայաստան»-ից՝ 1 պատգամավոր:
- Ի տարբերություն նախորդ՝ 6-րդ գումարման Ազգային ժողովի, որտեղ կար 12 դոլարային միլիոնատեր, 7-րդ գումարման ԱԺ-ում դոլարային միլիոնատեր պատգամավորները 2-ն են, երկուսն էլ ԲՀԿ-ից: 132 պատգամավորներից միայն Գագիկ Ծառուկյանի (ԲՀԿ) և Դավիթ Մանուկյանի (ԲՀԿ) հայտարարագրած դրամական միջոցների ծավալն է դոլարային արտահայտությամբ գերազանցում 1 մլն դոլարը:
- Ամենից շատ դրամական միջոցներ հայտարարագրած 10 պատգամավորներից 9-ը ԲՀԿ անդամ են, և միայն մեկն է «Իմ քայլը» խմբակցությունից՝ Տիգրան Կարապետյանը:
- ԱԺ 7-րդ գումարման բոլոր պատգամավորները միասին հայտարարագրել են 1 մլրդ 905.3 մլն դրամ, 171.6 մլն դոլար և 31.1 մլն եվրո դրամական միջոցներ: Ընդհանուր գումարը դրամային արտահայտությամբ կազմում է շուրջ 102.17 մլրդ դրամ, դոլարային արտահայտությամբ՝ 211.2 մլն ԱՄՆ դոլար:
- ԲՀԿ խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանին հայտարարագրած դրամական միջոցների ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ կազմում է 99 մլրդ դրամ կամ ԱԺ բոլոր պատգամավորների հայտարարագրած դրամական միջոցների 97%-ը:
- «Իմ քայլը» խմբակցությունում յուրաքանչյուր պատգամավորի բաժին է ընկնում միջինը 8.2 մլն դրամ, «Բարգավաճ Հայաստան»-ում՝ 3,9 մլրդ դրամ (առանց Ծառուկյանի՝ 92.4 մլն դրամ), և «Լուսավոր Հայաստան»-ում՝ 6.4 մլն դրամ:

Նախաձեռնողականություն, ակտիվություն

«Իմ քայլը» խմբակցություն. 7-րդ գումարման 2-րդ նստաշրջանի ընթացքում «Իմ քայլը» խմբակցության պատգամավորների հեղինակած նախագծերից 6-ն ընդունվել է ամբողջությամբ, 14-ը՝ առաջին ընթերցմամբ, 25 օրենքի նախագիծ շրջանառության մեջ է:

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ ստաշոջանի ընթացքում «Իմ քայլը» խմբակցության ամենաշատ «կողմ» քվեարկած պատգամավորը Հայկ Կոնջորյանն է՝ 117: Ամենաշատը՝ 20 անգամ, «դեմ» են քվեարկել Հայկ Գևորգյանը և Վահագն Հովակիմյանը՝ 20: Ամենաշատ «ձեռնպահ» քվեարկածը Երջանիկ Հակոբյանն է՝ 13, չքվեարկածը՝ Թագուհի Թովմասյանը՝ 42: Ամենաշատը բացակայել է Ռուբեն Ռուբինյանը՝ 108: Ամենաշատը՝ 14-ական հարց տվել են Էդգար Առաքելյանը, Արտակ Մանուկյանը և Հերիքնազ Տիգրանյանը, ելույթ ունեցել է Գևորգ Պապոյանը՝ 13:

Խմբակցության 88 պատգամավորից 14-ը ելույթ չի ունեցել և հարց չի տվել:

«**Բարգավաճ Հայաստան**» խմբակցություն. 2-րդ ստաշոջանի ընթացքում ԲՀԿ խմբակցության պատգամավորների հեղինակած նախագծերից 2-ն ընդունվել է ամբողջությամբ, 5-ը՝ առաջին ընթերցմամբ, 17 օրենքի նախագիծ շրջանառության մեջ է:

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ ստաշոջանի ընթացքում «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ամենաշատ «կողմ» քվեարկած պատգամավորը Ջանիբեկ Հայրապետյանն է՝ 176: Ամենաշատը՝ 11 անգամ, «դեմ» է քվեարկել Արայիկ Աղաբաբյանը: Ամենաշատ «ձեռնպահ» քվեարկածը Արթուր Դալլաբյանն է՝ 4, չքվեարկածը՝ Սողոմոն Սողոմոնյանը՝ 32: Ամենաշատը բացակայել է Վարդան Ղուկասյանը՝ 125: Խմբակցության ամենաշատ հարց տված(39) և ելույթ ունեցած(33) պատգամավորը Միքայել Մելքումյանն է:

Խմբակցության 26 պատգամավորից 7-ը ելույթ չի ունեցել և հարց չի տվել:

«**Լուսավոր Հայաստան**». 2-րդ ստաշոջանի ընթացքում ԼՀ խմբակցության պատգամավորների հեղինակած նախագծերից 4-ն ընդունվել է ամբողջությամբ, 8-ը՝ առաջին ընթերցմամբ, 17 օրենքի նախագիծ շրջանառության մեջ է:

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 2-րդ հերթական և հաջորդած արտահերթ ստաշոջանների ընթացքում «Լուսավոր Հայաստան» խմբակցության ամենաշատ «կողմ» քվեարկած պատգամավորը Արմեն Եղիազարյանն է՝ 164: Ամենաշատը՝ 16 անգամ, «դեմ» է քվեարկել Կարեն Սիմոնյանը: Ամենաշատ «ձեռնպահ» քվեարկածը Հարություն Բաբայանն է՝ 6, չքվեարկածը՝ Արման Բաբաջանյանը՝ 23: Ամենաշատը բացակայել է Էդմոն Մարությանը՝ 72: Խմբակցության ամենաշատ հարց տված(9) և ելույթ ունեցած(10) պատգամավորը Արկաղի Խաչատրյանն է:

Խմբակցության 18 պատգամավորից ելույթ չի ունեցել և հարց չի տվել միայն 1-ը:

ԱԺ օրենսդրական գործունեություն. պրակտիկա եւ միտումներ

5-րդ գումարման 2-րդ նստաշրջանում Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեությունը նախորդ գումարումներից տարբերվել է որոշ յուրահատկություններով: Դրանք պայմանավորված են այս խորհրդարանում առավել նախաձեռնող կոնստիգենտի առկայությամբ, ինչպես նաև օրենսդրական քննարկումներին խորհրդարանական մեծամասնության պատգամավորների ավելի ակտիվ մասնակցությամբ:

Խորհրդարանի օրինաստեղծ «արտադրողականությունը»

2-րդ նստաշրջանում խորհրդարանն ընդունել է 143 օրենք: ԱԺ «արտադրողականությունը» քանակական առումով նվազել է. 6-րդ գումարման ԱԺ 2-րդ նստաշրջանի ընթացքում, օրինակ, ընդունվել է 252, իսկ 3-րդ նստաշրջանի ընթացքում՝ 323 օրենք: Այս տարբերությունը կարող է բացատրվել երկու հիմնական գործոնով: Առաջին՝ 2015թ. հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխությունների զգալի մասը ուժի մեջ պետք է մտներ 2018թ. ապրիլին, այսինքն, կար գործող օրենսդրությունը սահմանադրական նորմերին համապատասխանեցնելու անհրաժեշտություն: Երկրորդ՝ փաստացի նոր ձևավորված կառավարությունը սեփական ծրագիրը կենսագործելու առումով հարաբերականորեն մեկնարկային վիճակում էր:

Այս իմաստով արձանագրված տարբերությունը դեռևս հնարավոր չէ գնահատել որպես «ցածր արտադրողականության» ցուցիչ, քանի որ միտումների մասին առավել հիմնավոր դատողություններ կարելի է անել՝ արձանագրված ցուցանիշը հաջորդ նստաշրջանների ընթացքում օրենքների ընդունման դինամիկայի հետ համադրելու արդյունքում: Եթե նստաշրջանի մեկնարկին լիազումար նիստերի օրակարգերը նախագծերի սակավության պատճառով սպառվում էին առավելագույնը 3 օրվա ընթացքում, ապա նստաշրջանի ավարտին խորհրդարանը չէր հասցնում սպառել օրակարգերը, ինչի հետևանքով առաջանում էր արտահերթ նիստեր և նստաշրջաններ հրավիրելու անհրաժեշտություն:

Օրենսդրական նախաձեռնողականություն. ԱԺ-կառավարության հարաբերակցություն

Նստաշրջանի ընթացքում ընդունված 143 օրենքներից 12-ի կամ 9 տոկոսի հեղինակը խորհրդարանն է (պատգամավորներ՝ 8, խմբակցություններ՝ 4 օրենք), իսկ 131-ինը կամ 91 տոկոսինը՝ կառավարությունը:

2-րդ նստաշրջանի ընթացքում գումարվել է ԱԺ 4 արտահերթ նիստ և 3 արտահերթ նստաշրջան, որոնք հրավիրվել են կառավարության նախաձեռնությամբ և օրակարգով: 143 օրենքներից 63-ը կամ 44 տոկոսն ընդունվել են հենց արտահերթ նստաշրջանների ընթացքում:

Չուտ ընդունված օրենքների շրջանակում օրինագծերի հեղինակման առումով օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև հարաբերակցությունը (9%-91%) նախորդ գումարման խորհրդարանների համեմատությամբ որևէ փոփոխության չի ենթարկվել, սակայն դեռևս ամբողջությամբ չընդունված օրինագծերի վիճակագրությամբ արձանագրվել են նոր միտումներ:

Ուշագրավ է, որ առաջին ընթերցմամբ ընդունվել է պատգամավորների և խմբակցությունների հեղինակած 28 օրինագիծ, որոնք տեղափոխվել են 3-րդ նստաշրջանի օրակարգ: Այսինքն, խորհրդարանականների հեղինակած և առաջին ընթերցմամբ ընդունված նախագծերի տեսակարար կշիռը ամբողջությամբ ընդունված օրինագծերի համեմատ կրկնակից ավելի է: Եթե դրան հավելենք այն փաստը, որ շրջանառության մեջ դրված, բայց նստաշրջանի օրակարգ չընդգրկված 124 նախագծերից 54-ի կամ 43.5 տոկոսի հեղինակը ևս պատգամավորներն են, ակնհայտ կդառնա, որ խորհրդարանն աստիճանաբար ընդլայնում է իր օրինաստեղծ պոտենցիալը և նախաձեռնողականությունը՝ փորձելով որոշակիորեն վերականգնել ԱԺ-կառավարություն խախտված բալանսը:

Թեև վաղ է այս միտումը դիտարկել որպես օրինաչափություն, սակայն արձանագրված դրսևորումները կարող են այդ ուղղությամբ զարգացում ապահովելու, նոր մշակույթ ձևավորելու նախանշաններ համարվել:

Մասնավորապես, արձանագրվել են դեպքեր, երբ ԱԺ մեծամասնությունը քաղաքական սկզբունքայնություն է հանդես բերել՝ մերժելու կառավարության նախագիծը: Ամենացայտուն օրինակը կառավարության ներկայացրած «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրինագիծը չընդունելն էր:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ խորհրդարանը կամ գլխադասային հանձնաժողովը կողմ է քվեարկել պատգամավորների հեղինակած նախագծերին՝ չնայած դրանց վերաբերյալ կառավարության բացասական եզրակացության: Մասնավորապես, «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Սիսակ Գաբրիելյանի հեղինակած «Յարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին, որով առաջարկվում էր ստեղծել ուսանողների վարձավճարները եկամտահարկից փոխհատուցելու մեխանիզմ, չնայած կառավարության բացասական եզրակացությանը, գլխադասային՝ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը տվեց դրական եզրակացություն:

Կամ՝ ԱԺ-ն առաջին ընթերցմամբ ընդունեց «Տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին ԲՀԿ պատգամավորների ներկայացրած օրենքի նախագիծը, թեպետ կառավարության եզրակացությունը դրական չէր:

Խմբակցությունները՝ օրենսդրական նախաձեռնությունների հեղինակ

«Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքով³ ԱԺ խմբակցությունն ստացել է օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք: Նախորդ գումարութների խորհրդարաններում խմբակցությունները նման իրավասությամբ օժտված չեն եղել:

Նոր գործառույթը օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավասությանը որոշակիորեն հաղորդում է քաղաքական երանգ, քանի որ խմբակցության անունից շրջանառության մեջ դրված օրինագծերի համար պատասխանատվությունը հավասարապես ստանձնում են դրա բոլոր անդամները՝ անկախ նրանից՝ անմիջականորեն ներգրավվածություն ունեցել են դրա մշակման և հիմնավորման գործընթացում, թե ոչ:

Նախագծեր հեղինակելու նոր հնարավորությունը լիարժեքորեն իրացրել է «Լուսավոր Յայաստան» խմբակցությունը: ԼՅ-ն խորհրդարանական 3 ուժերից միակն է, որն իր գրեթե բոլոր նախագծերը շրջանառության մեջ է դրել խմբակցության անունից (օրակարգում չընդգրկված 18 նախագծերից 17-ը, իսկ օրակարգում ընդգրկված բոլոր օրինագծերը ներկայացվել են խմբակցության անունից): ԲՀԿ-ն ունի նման 1 օրինագիծ, իսկ քաղաքական մեծամասնությունն առայժմ որևէ նման նախագիծ շրջանառության մեջ չի դրել: Ավելին՝ ուշագրավ է, որ օրակարգում ընդգրկված «Իմ քայլ»-ի ներկայացուցիչների հեղինակած 13 օրինագծերից 9-ը ներկայացրել է ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը, 3-ը՝ Գևորգ Պապոյանը: Օրակարգում չընդգրկված նախագծերի պարագայում «Իմ քայլ»-ը շատ ավելի ներկայացուցչական է, սակայն իրողությունն այն է, որ թիմային, հավաքական մոտեցում ցուցաբերելու հարցում քաղաքական մեծամասնությունն առայժմ զիջում է ընդդիմությանը:

Ընդդիմության դերը պառլամենտի օրինաստեղծ և քաղաքական գործառույթների իրացման հարցում

Խորհրդարանական կառավարման համակարգում պառլամենտական ընդդիմությանը վերապահվում է օրենսդիր իշխանությունում քաղաքական հավասարակշռության, ներքին վերահսկողության և օրենսդրական-քաղաքական օրակարգերի հանրայնացման գործառույթը: Սահմանադրությունը և ԱԺ կանոնակարգն այդ գործառույթն իրացնելու համար խորհրդարանական ընդդիմությանը զինել են ներկայացուցչական և գործառնական առավել քան բավարար կառուցակարգերով և գործիքակազմով:

Մասնավորապես, ապահովվել է պատգամավորական մանդատների առնվազն 1/3-ի չափով ընդդիմության երաշխավորված ներկայացվածությունը խորհրդարանում, ինչպես նաև՝ ԱԺ 3-րդ փոխնախագահի, մշտական հանձնաժողովների նախագահների կամ փոխնախագահների պորտֆելների տնօրինումը (ըստ խմբակցության մեծության), որոնցով ընդդիմությունն ստացել է նաև ԱԺ խորհրդին վերապահված՝ նստաշրջանների

16 ³ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենք, հոդված 65

և նիստերի օրակարգերի, դրանում ընդգրկված հարցերի քննարկման հերթականության որոշման, ընդհուպ պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով ՄԴ-ին դիմելու հարցերի քննարկման գործառույթների իրականացմանը մասնակցելու հնարավորություն:

Ընդդիմությունն ունի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 1/4-ի պահանջով քննիչ հանձնաժողով ձևավորելու, այդ կերպ Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող ու հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ ուսումնասիրություններ իրականացնելու, դրանք Ազգային ժողով ներկայացնելու և այդ հանձնաժողովում նախագահի կամ փոխնախագահի պաշտոններ զբաղեցնելու հնարավորություն:

Ընդդիմությունը ստացել է կառավարությանը հարցապնդում ներկայացնելու, դրա պատասխանի և քննարկման հիման վրա կառավարության առանձին անդամների հետագա պաշտոնավարման, ընդհուպ վարչապետին անվստահություն հայտնելու հարց հարուցելու, ինչպես նաև խմբակցության անդամի հեղինակած նախագծերի շուրջ յուրաքանչյուր նստաշրջանում ԱԺ առաջին լսում կազմակերպելու իրավասություն: Ընդդիմադիր խմբակցությունն ունի նաև իր կարգավիճակից բխող բացառիկ իրավունք՝ գլխադասային հանձնաժողովի եզրակացությունն ստացած կամ եզրակացությունը ներկայացնելու ժամկետը լրացած մեկ նախագիծ իր որոշմամբ արտահերթ համարելու և հերթական նիստերից մեկում օրենքի ուժով այն քննարկման դնելու:

Օրենսդրությամբ նախատեսված վերոնշյալ հնարավորություններից խորհրդարանական ընդդիմությունը լիարժեք չի օգտվել: Թեև ընդդիմադիր 2 խմբակցությունների պատգամավորների ընդհանուր ձայները բավարարում են, օրինակ, ԱԺ քննիչ հանձնաժողով ձևավորելու նախաձեռնության համար, սակայն նստաշրջանի ընթացքում այն չի իրացվել. ձևավորվել է 2 քննիչ հանձնաժողով, սակայն 2 դեպքում էլ նախաձեռնությունը եղել է «Իմ քայլը» խմբակցությանը:

Խորհրդարանական ընդդիմությունը հանդես չի եկել նաև օրինագծերի քննարկման նպատակով ԱԺ արտահերթ նիստ հրավիրելու նախաձեռնությամբ՝ 1 բացառությամբ: ԲՀ և ԼՀ խմբակցությունները նախաձեռնել են արտահերթ նիստ հրավիրելու ստորագրահավաք՝ քաղաքական հայտարարություն ընդունելու նպատակով: Առիթը 2019թ. մայիսին վարչապետ Նիկոլ Փաշինյանի կոչով քաղաքացիների կողմից դատարանների շենքերի ելքերի ու մուտքերի արգելափակումն էր. եւ նրա հայտարարությունը դատաիրավական համակարգի բարեփոխումների վերաբերյալ: Արտահերթ նիստ հրավիրելու ընդդիմադիր խմբակցությունների միջնորդությունը Ազգային ժողովի խորհուրդը մերժել է: Սա եղել է խորհրդարանական ընդդիմադիր խմբակցությունների համատեղ միակ նախաձեռնությունը:

Նստաշրջանի ընթացքում ընդդիմադիր խմբակցությունները հանդես չեն եկել իրենց հեղինակած օրինագծերից որևէ մեկը արտահերթ համարելու և հերթական նիստում քննարկման առարկա դարձնելու նախաձեռնությամբ, թեև 2 խմբակցություններն էլ ունեն շրջանառության մեջ են դրված և օրակարգ ընդգրկված բազմաթիվ նախագծեր:

2-րդ նստաշրջանի ընթացքում օրենսդրությամբ ընդդիմությանը տրված գործիքակազմն առավել հետևողականորեն կիրառել է «Լուսավոր Յայաստան» խմբակցությունը՝ ըստ Էուրոյան շարունակելով դեռևս նախորդ գումարման ԱԺ-ում «Ելք» խմբակցության որդեգրած քաղաքականությունը:

ԱԺ կանոնակարգով⁴ սահմանվում է, որ խմբակցությունն ունի յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում մեկ անգամ կառավարությանը հարցապնդումով դիմելու իրավունք: Կառավարությունը պարտավոր է մեկամսյա ժամկետում ներկայացնել պատասխան, որը օրենքի ուժով պետք է դառնա քննարկման առարկա: ԱԺ կանոնակարգը սահմանում է հարցապնդման քննարկման ընթացակարգը, ինչպես նաև դրա արդյունքում կառավարության անդամի հրաժարականի կամ վարչապետին անվստահություն հայտնելու հարցի քննարկման ընթացակարգերը:

Ակնհայտ է, որ այս ինստիտուտը խորհրդարանական մեծամասնությունը կարող է կիրառել միայն բացառիկ դեպքերում, երբ առկա է քաղաքական կամ ներիշխանական ճգնաժամ, որը դրսևորվում է խորհրդարանական մեծամասնության և կառավարության դիմակայությամբ: Այս իմաստով հարցապնդման և դրա քննարկման արդյունքում անվստահության հարցի հարուցման ինստիտուտը՝ որպես քաղաքական օրակարգի վրա ներգործության կարևոր գործիք, հնարավորություն է ընդդիմության համար, որքան էլ քիչ է դրանցով վերջնական հաջողությունների հասնելու հավանականությունը:

2-րդ նստաշրջանի ընթացքում այս ինստիտուտից օգտվել է միայն «ԼՅ» խմբակցությունը՝ կառուցվածքային փոփոխությունների նախաձեռնման համատեքստում հարցապնդում ուղղելով կառավարությանն այդ փոփոխությունների արդյունքում հնարավոր կադրային կրճատումների ծավալների, ակնկալվող տնտեսումների վերաբերյալ: Յարգապնդմանը տրված պարզաբանումները բավարար չհամարելով՝ ԼՅ խմբակցությունն օրենքի ուժով քվեարկության է ներկայացրել ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանի պաշտոնանկության հարցը վարչապետի առջև բարձրացնելու վերաբերյալ որոշման նախագիծը: ԱԺ կանոնակարգի 121-րդ հոդվածի համաձայն՝ կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը քվեարկության է դրվում առանց քննարկման:

⁴ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենք, հոդված 121

41 կողմ, 67 դեմ և 1 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ նախագիծը չի ընդունվել: Զվեարկությունն արտացոլել է քննարկումների ընթացքում ձևավորված՝ մեծամասնության և փոքրամասնության դիրքորոշումների հարաբերակցությունը՝ նյութականացնելով ԲՀ խմբակցության կողմից ԼՀ-ին այդ հարցում քաղաքականապես աջակցելու իրողությունը:

Թեև նստաշրջանի ընթացքում հարցապնդման գործիքի կիրառման միակ դեպքը կանխատեսելիորեն չի հանգեցրել ԱԺ կանոնակարգից բխող արդյունքին՝ ֆինանսների նախարարի պաշտոնանկության հարցը վարչապետին ներկայացնելուն, սակայն լուծել է կառավարության կառուցվածքի փոփոխության վերաբերյալ «Լուսավոր Չայաստան» խմբակցության տեսակետները հանրայնացնելու և դրանց շուրջ քննարկումների դաշտ ապահովելու խնդիրը:

Ընդդիմադիր խմբակցությունների ակտիվությունը նկատելի է եղել նաև օրինաստեղծ աշխատանքում: Նստաշրջանի ընթացքում ամբողջությամբ ընդունված նախագծերի շուրջ կեսի հեղինակը «Լուսավոր Չայաստան» և «Բարգավաճ Չայաստան» խմբակցություններն են, թեև խորհրդարանական ընդդիմությունը պատգամավորների թվով 2 անգամ զիջում է ԱԺ մեծամասնությունը: Պատկերը նույնն է նաև ոչ ամբողջությամբ ընդունված օրինագծերի դեպքում: Իշխող «Իմ քայլը» խմբակցությունը և ընդդիմադիր խմբակցությունները միասին հեղինակել են 14-ական օրինագիծ:

Օրակարգում ընդգրկված, դեռևս չընդգրկված և ամբողջությամբ ընդունված օրինագծերի քանակն ըստ խմբակցությունների պատգամավորների թվի դիտարկելու դեպքում պատկերն այսպիսին է՝

88 պատգամավոր ունեցող «Իմ քայլը» խմբակցության յուրաքանչյուր 2 պատգամավոր միջինացված հաշվարկով հանդես է եկել 1, «Բարգավաճ Չայաստան» խմբակցության 26 պատգամավորներից յուրաքանչյուրը՝ 1, իսկ «Լուսավոր Չայաստան» խմբակցության 18 պատգամավորներից յուրաքանչյուրը՝ 1.7 օրենսդրական նախաձեռնությամբ:

Մերժված օրինագծերի մեջ ևս մեծ տեսակարար կշիռ են կազմում ընդդիմության հեղինակած նախագծերը: Դրանց համեմատական վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել 2 հիմնական միտում: Զվեարկությամբ օրակարգ չընդգրկված նախագծերի մեջ քիչ չեն ընդդիմադիր խմբակցությունների՝ կարգավորման առարկայի և խնդրի տեսանկյունից կրկնվող օրինագծերը: Օրինակներից մեկը ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ առաջարկող ԲՀԿ և ԼՀԿ խմբակցությունների պատգամավորների առանձին ներկայացրած նախագծերն էին, որոնցով ընդդիմադիր խմբակցությունները փորձում էին լուծել կալանավորման 1 օրը ազատազրկման ձևով նշանակվող պատժի 1.5 օրվան հավասարեցնելու խնդիրը:

Սա, մի կողմից, վկայում է ընդդիմադիր խմբակցությունների ներքին դիրքային պայքարի, մյուս կողմից՝ օրենքների համատեղ մշակման և շրջանառման համար անհրաժեշտ երկկողմ կոնսենսուսի բացակայության մասին: Վերջինի ապացույցն է նաև այն, որ երկու ընդդիմադիր խմբակցությունները համահեղինակությամբ որևէ օրենսդրական նախաձեռնություն շրջանառության մեջ չեն դրել:

Ընդդիմության նախագծերը հաճախ տրամագծորեն հակադրվել են կառավարության և մեծամասնության ծրագրային մոտեցումներին, ինչը նվազեցրել է իշխանություն-ընդդիմություն հարթությունում փոխզիջումների հանգելու հնարավորությունը և դարձել օրակարգում դրանց ընդգրկվելը մերժելու պատճառ:

Չնայած բացարձակ մեծամասնություն ունենալուն և որոշումների կայացման «հսկիչ փաթեթին» տիրապետելուն՝ նստաշրջանի ընթացքում քաղաքական մեծամասնությունը հիմնականում գործել է խորհրդարանական ընդդիմության հետ երկխոսության տրամաբանությամբ, թեև առանձին դեպքերում շեղվել է այդ գործելակերպից: Վարքագծային տարբեր մոտեցումներ են ցուցաբերվել 3 առանցքային նախաձեռնությունների քննարկման ժամանակ: Խոսքը վերաբերում է «Պետական տուրքի մասին», «Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» նախագծերի քննարկման ու ընդունման գործընթացներին՝ կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթներով:

Տեղեկանք. «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ առաջարկող փաթեթի շրջանառման նպատակը ներմուծվող ցեմենտի համար պետական տուրքի սահմանման միջոցով տեղական արտադրության համար առավել մրցակցային պայմաններ ստեղծելն էր: Փաթեթն ընդունվել է հունիսի 3-ին, ձայների 85 կողմ, 16 դեմ և 3 ձեռնպահ հարաբերակցությամբ՝ ներկրվող ցեմենտի համար 14 հազար դրամ պետական տուրքի սահմանմամբ՝ նախապես ամրագրված 22 հազարի փոխարեն: «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը դեմ էր, իսկ «Բարգավաճ Հայաստան»-ը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ քվեարկությանը կողմ արտահայտվեց, չնայած առաջին քվեարկության ժամանակ սկզբունքորեն դեմ արտահայտվելուն: Պայմանավորված խորհրդարանում «ԲՀ» խմբակցության ղեկավարի՝ այս ոլորտում բիզնես շահեր ունենալու հանգամանքով՝ փաթեթը միանգամից լուրջ և սուր քննարկումների առարկա դարձավ: Բացի համապատասխան գլխադասային հանձնաժողովում և ԱԺ լիազումար նիստերում նախագծի շուրջ ծավալված դեբատներից, որին խորհրդարանական ընդդիմությունը ներգրավվել է լիարժեքորեն, հանդիպումներ են կազմակերպվել նաև ոլորտի տնտեսվարող սուբյեկտների՝ ցեմենտ արտադրող կազմակերպությունների և կառուցապատողների հետ, որոնք հիմնականում լուսաբանվել են և եղել հանրության անմիջական տեսադաշտում

Նույն մոտեցումը՝ պրոցեսի հրապարակայնության ապահովման և ընդդիմության ներգրավվածության և լուրջ դերակատարության տեսանկյունից, դրսևորվել է նաև «Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» և հարակից այլ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման գործընթացում:

Տեղեկանք. Հարկային օրենսգրքում և կից ներկայացված օրենքներում փոփոխություններ առաջարկող օրենսդրական փաթեթն ընդունվել է ԱԺ հունիսի 7-ի արտահերթ նիստում, ձայների 73 կողմ և 32 դեմ ձայնով: Խորհրդարանական ընդդիմադիր խմբակցությունները դեմ են քվեարկել:

Օրենսդրական փաթեթով հարկաբյուջետային քաղաքականության մի շարք սկզբունքային փոփոխություններ են նախանշվել: Մասնավորապես, ներդրվել է եկամտային հարկի միասնական դրույթաչափ՝ 2020թ. հունվարի 1-ից սահմանվելով 23, իսկ մինչև 2023թ-ը աստիճանաբար նվազեցվելով մինչև 20 տոկոս, շրջանառության հարկի շեմը 58.35 մլն դրամից բարձրացվել է մինչև 115 մլն դրամ, բարձրացել են ծխա-խոտի, և ալկոհոլային խմիչքների համար ակցիզային հարկի դրույթաչափերը, ընդլայնվել է այս հարկատեսակով հարկման ենթակա ապրանք-ների շրջանակը, 2 տոկոսային կետով նվազեցվել է շահութահարկի դրույթաչափը:

Բուռն քննարկումներ են ծավալվել հատկապես եկամտահարկի համահարթեցման քաղաքական ուղեգծի, շրջանառության հարկի շեմի բարձրացման, գրավատների և փոխանակման կետերի գործունեության համար պետական տուրքերի դրույթաչափերի եականորեն բարձրացման՝ տնտեսվարողների վրա հնարավոր բացասական հետևանքների և ռիսկերի, փաթեթի ընդունման կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում տնտեսական հետևանքների հաշվարկվածության և վերլուծվածության, հնարավոր ռիսկերի և մարտահրավերների կանխատեսման հարցերի շուրջ:

Փաթեթով առաջարկվող փոփոխությունների շուրջ հնարավորինս լայն համախոհության միջավայր ստեղծելու, հանրային ներգրավվածությունն ապահովելու նպատակով ԱԺ գլխադասային՝ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը անցկացրել է խորհրդարանական լուսմներ: Փաթեթն ԱԺ ուղարկվելուց մինչև երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունելը, այսինքն՝ մինչև 2019թ. հունիսի 27-ը, տևել է ավելի քան երկու ամիս: Ընդ որում՝ առաջին ընթերցմամբ քվեարկությունից՝ հունիսի 7-ից մինչև երկրորդ ընթերցմամբ քվեարկությունը տևել է 18 օր: Եթե նկատի ունենանք, որ խոսքը վերաբերում է ոչ թե նոր օրենսգրքին, այլ փոփոխությունների նախագծին, այդ ժամանակահատվածը կարելի է բավարար համարել խորհրդարանի նախաձեռնությամբ դրա հանրայնացման և ներառականության ապահովման համար:

Այսինքն, խորհրդարանական ուժերը բավական ժամանակ ունեցել են առաջարկություններ ներկայացնելու համար և հանդես են եկել նախագծի լրամշակմանն ուղղված փաթեթներով: Խորհրդարանական ընդդիմության դրսևորված մերժողականությունը տվյալ դեպքում բացատրվել է իրենց բազմաթիվ սկզբունքային առաջարկությունները, որոնք, ըստ էության, խարսխված էին հարկային քաղաքականության որոշակիորեն այլ տրամաբանության վրա, քաղաքական իշխանության և Կառավարության կողմից մերժվելու հանգամանքով՝ չնայած ընդդիմության առանձին առաջարկություններ ներառվել են նախագծում: Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում խորհրդարանական ընդդիմության դեմ դիրքորոշման հիմնական պատճառը եղել է ոչ թե ցանկացած գնով, երբեմն առանց խորքային քննարկումների և շտապողականությամբ առանցքային նշանակության օրինագծերն ընդունելու իշխանության մղումը, ինչը դրսևորվում էր նախորդ խորհրդարաններում, այլ քաղաքական անհամաձայնությունները կողմերի միջև:

Ի տարբերություն վերոնշյալի՝ քաղաքական մեծամասնությունը առավել կոշտ մոտեցում է դրսևորել «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրինագծի ընդունման գործընթացում:

Տեղեկանք. «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը Ազգային ժողովն ընդունել է 2019 թ. մայիսի 8-ին, 79 կողմ, 41 դեմ և 1 ձեռնպահ ձայնով: Առաջարկվող փոփոխություններով, հիմնականում միավորումների միջոցով, կրճատվել են 17 նախարարություններից 5-ը, առաջին փոխվարչապետի պաշտոնը, մեկ նախարարություն՝ Սփյուռքի, լուծարվել է՝ վերածվելով Սփյուռքի հարցերով հանձնակատարի գրասենյակի վարչապետի աշխատակազմում:

Նախագծին կողմ են եղել միայն «Իմ քայլի» պատգամավորները: «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» խմբակցությունները քվեարկել են դեմ:

Խորհրդարանական ընդդիմության բացասական դիրքորոշումը կառուցված էր երկու հիմնական գործոնի վրա: Նախարարությունների միավորումը վիճարկվում էր արդյունավետության տեսանկյունից՝ փոփոխությունների համար համոզիչ փաստարկներ չբերելու, հիմնավորումներ չներկայացնելու մեղադրանքով: Ընդ որում՝ մեղադրանքները վերաբերում էին ինչպես փոփոխությունների ենթարկվող ոլորտների հետագա արդյունավետ քաղաքականության մշակմանն ու իրականացմանը, այնպես էլ առհասարակ պետական կառավարման և կադրային քաղաքականության արդյունավետությանը: Այս համատեքստում էր, որ «Լուսավոր Չայաստան» խմբակցությունը կիրառեց կառավարությանը հարցապնդում ներկայացնելու, ապա նաև դրա հիման վրա ֆինանսների նախարարի պաշտոնանկության հարցը բարձրացնելու՝ ԱԺ կանոնակարգ օրենքի 121-րդ հոդվածով նախատեսված մեխանիզմները՝ փաստացի խորհրդարանական ընդդիմության դիրքորոշումը փորձելով վերածել կոնկրետ քաղաքական պրոդուկտի:

Երկրորդ գործոնը, որն առանձնահատուկ շեշտում էր հատկապես «Լուսավոր Չայաստան» խմբակցությունը, այն էր, որ կառավարության կառուցվածքի փոփոխության մեջ չեն նկատվում կենտրոնացած իշխանական ընդգրկուն լծակներից գործող վարչապետի կողմից մասնակիորեն հրաժարվելու և դրա վերաբերյալ նախկինում արտահայտած պատրաստակամությունն ի կատար ածելու տրամադրվածություն: Որպես դրա հիմնական փաստարկ՝ վկայակոչվում էր այն հանգամանքը, որ կառավարությունը մերժում էր ոստիկանության և ԱԱԾ-ի կարգավիճակը փոխելու ու վարչապետին ենթակա կառույցներից նախարարություններ դարձնելու, այդպիսով այդ մարմիններն ուղղակի խորհրդարանին հաշվետու դարձնելու իրենց առաջարկությունը:

Այս օրինագծի դեպքում քաղաքական մեծամասնությունը փաստացի ավելի քիչ լոյալություն է դրսևորել խորհրդարանական փոքրամասնության նկատմամբ՝ ոչ միայն շրջանցելով վերոնշյալ նախորդ գործընթացների օրինակով լայն հանրային, մասնագիտական ու քաղաքական քննարկումներ նախաձեռնելու անհրաժեշտությունը, այլև՝ զիջումների չգնալով: Խորհրդարանական մեծամասնությունը օգտվել է իր ունեցած թվային առավելության միջոցով դրված քաղաքական նպատակին հասնելու հնարավորությունից:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Պետական մարմինների հաշվետվությունների, զեկույցների, հաղորդումների ներկայացման և քննարկումների պրակտիկան

Խորհրդարանական կառավարման համակարգում պառլամենտն օժտված է իշխանության մյուս ճյուղերի և հատկապես գործադիր իշխանության նկատմամբ լրջագույն վերահսկողական լծակներով: Պառլամենտական վերահսկողության իրավական երաշխիքներն ու սկզբունքները սահմանված են Սահմանադրությամբ, իրացման մեխանիզմները՝ հիմնականում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով:

Վերահսկողական գործառույթների իրականացման գործիքակազմը ներառում է՝

- գործադիր, դատական իշխանությունների, սահմանադրական կարգավիճակ ւնեցող այլ և ինքնավար մարմինների ղեկավար կազմերի ընտրության կամ նշանակման, պաշտոնազրկման կամ հետկանչի մեխանիզմները,
- գործադիր, ինքնավար մարմինների և սահմանադրական կարգավիճակ ունեցող մարմինների կողմից իրենց գործունեության ընթացքի արդյունքների մասին տարեկան հաղորդումները, զեկույցները ու հաշվետվությունները, առանձին դեպքերում՝ նաև հաջորդ տարվա գործունեության ծրագրերը քննարկելը,
- ԱԺ քննիչ, ժամանակավոր հանձնաժողովների միջոցով ցանկացած հարց կամ խնդիր ուսումնասիրության առարկա դարձնելը:

7-րդ գումարման ԱԺ 2-րդ նստաշրջանի ընթացքում քննարկվել է՝

- 2018 թվականի ընթացքում կառավարության ծրագրի կատարման վիճակի և արդյունքների վերաբերյալ զեկույցը,
- Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը,
- «2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը,

- ՀՀ դատախազության 2018 թվականի գործունեության մասին հաղորդումը,
- Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի 2018 թվականի գործունեության մասին հաղորդումը,
- Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի 2018 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը,
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը (Գնաճի հաղորդում):

Այս փաստաթղթերի խորհրդարանական քննարկումների ուսումնասիրությունն ի հայտ է բերել մի քանի առանձնահատկություններ և օրինաչափություններ, որոնք վկայում են նախկին գումարման խորհրդարանների համեմատ վերահսկողական գործառույթի իրացման պրակտիկայի որոշակի փոփոխությունների մասին:

- Խորհրդարանը չի հաստատում Հաշվեքննիչ պալատի գործունեության հաջորդ տարվա ծրագիրը, ինչպես նախկինում՝ Վերահսկիչ պալատի դեպքում: 2015թ. փոփոխված Սահմանադրությամբ այս գործառույթը վերապահվել է Հաշվեքննիչ պալատին, որը «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով պարտավորություն ունի այդ ծրագիրը, ընթացիկ եզրակացությունների, պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության և գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման հետ, դրանց հաստատումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ընդամենը խորհրդարան և կառավարություն ուղարկելու: Ծրագիրն առանձին ԱԺ-ում քննարկման առարկա չի դառնում, և ԱԺ կանոնակարգով նման ընթացակարգ նախատեսված չէ: Նման մոտեցում է որդեգրվել նաև Կենտրոնական բանկի կողմից Ազգային ժողով ուղարկվող Կենտրոնական բանկի վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների վերաբերյալ տեղեկատվության պարագայում:
- Փոփոխության է ենթարկվել նաև Կենտրոնական բանկի խորհրդարանական հաշվետվողականության ինստիտուտը: Նախկինում Կենտրոնական բանկն ԱԺ էր ներկայացնում դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման նախորդ տարվա հաշվետվությունը (գնաճի հաշվետվություն) և առանձին՝ հաջորդ տարվա դրամավարկային քաղաքականության ծրագիրը: Կառավարման նոր համակարգում յուրաքանչյուր տարի «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով ու ժամկետում Ազգային ժողովի նիստում ներկայացվում է Կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը,

որը բաղկացած է ընթացիկ տարվա առաջին եռամսյակում հաստատված դրամավարկային քաղաքականության ծրագրի և նախորդ տարվա դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաղորդումներից: 2015թ. փոփոխված Սահմանադրությամբ ԿԲ դրամավարկային քաղաքականության ծրագիրը հաստատում է ԿԲ-ն և ԱԺ է ներկայացնում դրա վերաբերյալ հաղորդում:

Այսպես դե յուրե ձևակերպում է տրվել ԿԲ-ի կողմից երկու փաստաթղթերը միաժամանակ քննարկման առարկա դարձնելու նախկին խնդրահարույց այն պրակտիկային, երբ հաջորդ տարվա դրամավարկային քաղաքականության ծրագիրն ու նախորդ տարվա հաշվետվությունը քննարկման առարկա էին դարձվում միաժամանակ՝ երբեմն խախտելով բնականոն հերթականության տրամաբանությունը: Նույն խնդիրն առկա էր նաև Վերահսկիչ պալատի դեպքում, որի պարագայում խնդիրը լուծվել է գործունեության ծրագրի հաստատումը ԱԺ-ի իրավասության տիրույթից հանելու եղանակով:

- Եսպես բարելավվել է ԱԺ-ի քննարկման ենթակա հաղորդումների, զեկույցների ներկայացման և քննարկման ժամկետների պահպանման պրակտիկան, որը լուրջ խնդիր էր նախորդ գումարման խորհրդարանների պարագայում: Դրան նպաստել է ԱԺ նոր կանոնակարգով ժամկետների կոնկրետացման և միասնականացման հանգամանքը:

ՀՀ գլխավոր դատախազը, Մարդու իրավունքների պաշտպանը, Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը նախորդ տարվա իրենց գործունեության մասին հաղորդումներն ու զեկույցները ԱԺ են ներկայացնում մինչև ընթացիկ տարվա ապրիլի 1-ը, Կենտրոնական բանկն իր գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը՝ մինչև ընթացիկ տարվա մայիսի 1-ը, Հաշվեքննիչ պալատը (Վերահսկիչ պալատը)՝ մինչև հունիսի 1-ը, ԿԸՀ-ն՝ երկու տարին մեկ անգամ՝ մինչև ապրիլի 1-ը կամ յուրաքանչյուր ընտրությունից հետո մեկամսյա ժամկետում:

Բոլոր փաստաթղթերը ԱԺ ներկայացվել են մինչև սահմանված վերջնաժամկետների լրանալը և քննարկվել են տվյալ նստաշրջանի ընթացքում: Չի արձանագրվել որևէ դեպք, երբ այդ փաստաթղթերի քննարկումները տեղափոխվեն հաջորդ նստաշրջաններ, ինչպես նախկինում էր, որով վերահսկողական գործառույթը զգալիորեն ֆորմալացվում էր և դարձվում ինքնանպատակ:

Պրակտիկայի բարելավումը պայմանավորված է նաև ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքով քննարկումների, մտքերի փոխանակության ռեժիմների արագացման իրավական կարգավորումներով:

- Վերահսկողական նշանակության վերոնշյալ փաստաթղթերի քննարկումներում դրսևորվել է մեկ հիմնական օրինաչափություն. ինչպես քաղաքական մեծամասնության, այնպես էլ խորհրդարանական ընդդիմության խմբակցությունները շեշտադրումն առավելապես կատարել են համապատասխան ոլորտներում կոռուպցիայի դեմ պայքարի բաղադրիչի վրա՝ համակարգի ներքին իրողությունների կամ հաղորդումներն ու զեկույցները ներկայացնող պաշտոնատար անձանց նախկին գործունեության, գույքի, եկամուտների, վարքագծի համատեքստում: Քննարկումները մեծամասամբ վերածվել են յուրատեսակ հաշվեքննության՝ հնչող սուր քննադատություններով, որոնք տեղի են ունեցել հայկական պառլամենտարիզմի համար անսովոր՝ չափազանց մեծ թվով պատգամավորների հարցելույթներով: Այս գերակտիվությունն ու մասնակցայնությունը, ինչպես նաև կոնկրետ կոռուպցիոն թիրախների վրա սևեռվածությունը հանգեցրել է քննարկումների առարկայի շրջանակի նեղացման և թույլ չի տվել վեր հանել ներհամակարգային խորքային հիմնահարցերը, ծավալել բովանդակային, մասնագիտական համակողմանի քննարկումներ: Դիտարկումները փաստում են նաև, որ ԱԺ մշտական հանձնաժողովներում քննարկումները բովանդակային առումով ավելի մասնագիտական ու հիմնախնդրային են, քան լիազումար նիստերի ընթացքում:
- Բացառությամբ Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության՝ ԱԺ-ն վերահսկողական բնույթի մնացած բոլոր փաստաթղթերի քննարկումների դեպքում շարունակում է սահմանափակված մասը միայն «ի գիտություն» ընդունելու հնարավորությամբ: Այս իրողությունն ավելի է ընդգծվում Հաշվեքննիչ պալատի գործունեության հաջորդ տարվա ծրագրի հաստատման և ԿԲ դրամավարկային քաղաքականության ծրագրի քննարկման լիազորություններից խորհրդարանի զրկման ֆոնին: Չնայած հայտարարություն ընդունելու առկա հնարավորությանը՝ վերահսկողական այս առանցքային ֆունկցիայի շրջանակում նման փաստաթղթերի քննարկման արդյունքում դրանց կապակցությամբ քաղաքական դիրքորոշում արտահայտելու իրավական կառուցակարգի բացակայությունը որոշ չափով երկրորդային է դարձնում քննարկումները՝ թույլ չտալով հստակ ձևակերպել իշխանություն կրող հիմնական պետական մարմնի միասնական դիրքորոշումը:
- Վերոնշյալ միտումի ձևավորմանը առանձին դեպքերում նպաստել է նաև հաղորդումների կամ զեկույցների բովանդակության՝ խորհրդարանական քննարկումների ձևաչափին անհամահունչ հագեցվածությունն ու ծավալը: Այս իմաստով աչքի են ընկել հատկապես «2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության վիճակի մասին» և ՀՀ դատախազության 2018 թվականի գործունեության մասին հաղորդումները:

Առաջինի ծավալը, օրինակ, կազմել է 700 էջ. ներկայացվել է աննախադեպ դետալային, ընդգրկուն, մասնագիտական հանրույթի համար լուրջ հետաքրքրություն ներկայացնող փաստաթուղթ, որի խորհրդարանական քննարկումը, սակայն, հնարավորություն չի տվել ընդհանրական ավարտուն պատկերացումներ ձևավորել առկա իրավիճակի վերաբերյալ:

ՀՀ դատախազության 2018թ. գործունեության հաղորդումը նույնպես նախորդների համեմատ ծավալուն էր՝ կենտրոնացած ոչ միայն վիճակագրական ցուցանիշների, այլ նաև գործունեության որակական արդյունքների, համակարգային բնույթի խնդիրների օրենսդրական կարգավորումների առաջարկությունների վրա: Փաստաթղթի խորհրդարանական քննարկման դիտարկումը, սակայն, ցույց է տալիս, որ ծավալուն լինելու հանգամանքն այդ հաղորդումն առավելապես հետաքրքրական է դարձնում քրեաիրավական ոլորտին տեղյակ, իրավաբան պատգամավորների համար՝ չնպաստելով դրա շուրջ համակողմանի քննարկումների ծավալմանը:

Կառավարության ծրագրի կատարողականի քննարկումը՝ ԱԺ վերահսկողության նոր գործիք

2015 թվականին փոփոխված Սահմանադրությամբ⁵ Ազգային ժողովին տրվել է կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների նկատմամբ տարեկան կտրվածքով վերահսկողություն իրականացնելու գործառույթ: Այն ներկայացուցչական կամ միջնորդավորված ժողովրդավարության և կառավարության հաշվետվողականության իրացման շատ ավելի բարձր քաղաքական մակարդակ է և ԱԺ-ի վերահսկողական գործառույթին հաղորդում է առավել գործառնական, շոշափելի և քաղաքական նշանակություն:

ԱԺ կանոնակարգ-օրենքով⁶ 127-րդ հոդվածով նախատեսվում է, որ գործադիրը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1-ը պարտավոր է խորհրդարանին ներկայացնել զեկույց՝ իր հիմնարար ծրագրի՝ նախորդ տարում կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ: Ծրագրի տարեկան կատարողականի քննարկման համար սահմանվում է գրեթե այնպիսի ընթացակարգ, ինչպիսին նախատեսվում է բյուջեի կատարողականի քննարկման ժամանակ: Մասնավորապես՝ հարակից զեկուցմամբ հանդես գալու հնարավորություն է վերապահվում բոլոր մշտական հանձնաժողովների, կառավարության՝ մինչև երեք անդամի, ինչից հետո նրանց կարող են նաև հարցեր տրվել:

Ի տարբերություն բյուջեի կատարողականի՝ ծրագրի կատարողականը չի քվեարկվում, սակայն սահմանված ընթացակարգը թույլ է տալիս ծավալել բովանդակային և առարկայական քննարկումներ:

⁵ ՀՀ Սահմանադրություն, հոդված 156

⁶ Ազգային ժողովի կանոնակարգ օրենք, հոդված 127

Այս իրավանորմը՝ կառավարության ծրագրի կատարողականը ԱԺ ուղարկելու և քննարկելու համար սահմանված ժամկետների հստակ պահպանմամբ, առաջին անգամ կիրառվել է 7-րդ գումարման Ազգային ժողովի 2-րդ նստաշրջանում:

Նախորդ կառավարության՝ 2018թ. հունիսին 7-ին խորհրդարանի հավանությանն արժանացած ծրագրի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցը քննարկվել է 2019թ. մարտին՝ ԱԺ ներկայացվելուց հետո մեկ ամիսը չանցած: Խոսքը հետհեղափոխական առաջին՝ իբրև վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած կոալիցիոն կառավարության ծրագրի մասին է: Դրանում, որպես կառավարության գործունեության առանցքային ուղենիշային նպատակ, նշվում է 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխության արժեքների ամրագրումը՝ «որպես հանրային ու ազգային հարաբերությունների հիմք և քաղաքական մշտական իրողություն»:

Այս իմաստով կառավարության ծրագրի իրականացման քննարկումը դիտարկվում էր որպես անձամբ վարչապետի գործունեության և արդյունավետության, ինչպես նաև դրված «հեղափոխական» նպատակների, արդեն գործող կառավարության ծրագրի կոնցեպտուալ խնդիրների լուծման կարողականության չափման քաղաքական գործընթաց: Ուշագրավ է, որ չնայած ծրագրի կատարման մասին զեկույցի քննարկումը չուղեկցվեց ԱԺ բոլոր մշտական հանձնաժողովների և կառավարության ներկայացուցիչների հարակից զեկույցներով, սակայն վարչապետ Փաշինյանին հարցեր հղելու համար հերթագրվեց խորհրդարանի ավելի քան 1/3-ը՝ 45 պատգամավոր:

Ծրագրի քննարկումը ավարտվում է առանց քվեարկության և ԱԺ-ի կողմից որևէ փաստաթղթի ընդունման, սակայն պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկմամբ, որը քվեարկվում է, փաստացի, լրացվում է խորհրդարանի քաղաքական վերաբերմունք արտահայտելու հնարավորությունը: Այս իմաստով ծրագրի կատարողականի քննարկումը լրացուցիչ գործիք է բյուջեի կատարման ընթացքը, դրա վրա ազդող գործոնները կառավարության ծրագրային առաջնահերթությունների տեսանկյունից դիտարկելու և ուղեգծի մեջ մտալու հանգամանքին քաղաքական գնահատական տալու համար:

2019թ. հունիսի 20-ին 95 կողմ, 15 դեմ և 0 ձեռնպահ ձայներով ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» ԱԺ որոշումը՝ խորհրդարանն ըստ էության հավանության է արժանացրել նաև կառավարության ծրագրի նախորդ տարվա կատարողականը:

Իշխանության մարմինների ձևավորմանը ԱԺ մասնակցության գործառույթի իրավական և գործնական «տուրբուլենտության» դրսևորումները նստաշրջանի ընթացքում

Պառլամենտական կառավարման համակարգում խորհրդարանին բացառիկ դերակատարում է վերապահված իշխանության մյուս ճյուղերի կազմավորման հարցում: Այն իրացվում է պետական համակարգային մարմինների ղեկավար կազմերի ընտրության կամ նշանակման, ինչպես նաև իր կողմից նշանակված պաշտոնատար անձանց լիազորությունները դադարեցնելու, «հետ կանչելու» իրավասության սահմանմամբ:

Սահմանադրական այս լիազորություններով խորհրդարանը քաղաքական պատասխանատվություն է ստանձնում իշխանության մյուս բոլոր թևերի, դրանք ներկայացնող մարմինների ղեկավար կազմերի գործունեության համար:

Ազգային ժողովն է, մասնավորապես, ընտրում և «հետ կանչում» հանրապետության նախագահին, ՀՀ վարչապետին, Գլխավոր դատախազին, Մարդու իրավունքների պաշտպանին, Հաշվեքննիչ պալատի նախագահին և մյուս անդամներին, Կենտրոնական բանկի նախագահին, նրա տեղակալներին և խորհրդի մյուս անդամներին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին և անդամներին, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին:

Սահմանադրությունը խորհրդարանի համար որոշակի սահմանափակումներ է նախատեսել դատական իշխանության վերաբերյալ՝ պայմանավորված վերջինի անկախության երաշխիքներն ապահովելու սկզբունքով:

Խորհրդարանին իրավասություն է վերապահված ընտրելու Սահմանադրական դատարանի նախագահին և 9 անդամներից 3-ին, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին և դատավորների թեկնածուներին, Բարձրագույն դատական խորհրդի 10 անդամներից 5-ին: Ազգային ժողովը, սակայն, չունի վերջիններիս հետ կանչելու հնարավորություն:

7-րդ գումարման ԱԺ 2-րդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանն առիթ չի ունեցել գործադրելու իր կողմից ընտրված պաշտոնատար անձանց լիազորությունները դադարեցնելու, հետ կանչելու, անվստահություն հայտնելու և պաշտոնանկ անելու՝ ԱԺ կանոնակարգ-օրենքով սահմանված լիազորությունները⁷:

Փոխարենն անդրադարձել է ինքնավար երկու մարմինների՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահների, ինչպես նաև Սահմանադրական դատարանի անդամի, Բարձրագույն դատական խորհրդի 3 անդամների ընտրությանը:

Ինքնավար մարմինների ղեկավարների ընտրությունը

Սահմանադրության 122-րդ հոդվածով սահմանված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով, օրենքի հիման վրա ստեղծվող ինքնավար մարմինները ձևավորվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

2-րդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանը հնարավորություն է ունեցել ընտրելու ինքնավար մարմնի կարգավիճակ ունեցող 2 կառույցի՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) և Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՏՄՊՊՀ) նախագահներին և անդամներին:

Երկուսի դեպքում էլ նոր նշանակումների անհրաժեշտությունը պայմանավորված էր Սահմանադրությամբ նախատեսված ինքնավար մարմինների կարգավիճակ ստանալուց բխող օրենսդրական փոփոխություններով: Դրանցով նախատեսվել է հանձնաժողովների նոր կազմերի ձևավորում՝ վարչապետի առաջարկությամբ ԱԺ կողմից փակ գաղտնի քվեարկության արդյունքներով նշանակում կատարելու ընթացակարգով:

ՀԾԿՀ նախագահի պաշտոնում վարչապետն առաջարկել է Գարեգին Բաղդամյանի թեկնածությունը, ով մինչ այդ զբաղեցրել էր ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալի պաշտոնը: Ապրիլի 18-ին կայացած փակ գաղտնի քվեարկությամբ նա ընտրվել է 85 կողմ և 20 դեմ ձայների հարաբերակցությամբ: Մայիսի 30-ին նույն կառուցակարգով խորհրդարանն ընտրել է նաև ՀԾԿՀ 4 անդամներին:

ՏՄՊՊՀ նախագահի ընտրությունները, որին վարչապետն առաջադրել է գյուղատնտեսության նախկին նախարար Գեղամ Գրիգորյանի թեկնածությունը, կայացել են ապրիլի 22-ին: Նա ընտրվել է 95 կողմ, 26 դեմ ձայների հարաբերակցությամբ: Ուշագրավ է, որ ԱԺ-ն մայիսի 31-ին կայացած քվեարկությամբ ՏՄՊՊՀ անդամներ ընտրել է վարչապետի ներկայացրած 5 թեկնածուներից 4-ին: Այս հանձնաժողովն օրենքով պետք է կազմված լինի 7 անդամից (նախագահը ներառյալ), մինչդեռ առաջադրում-քվեարկությունների արդյունքում ձևավորվել է 5 անդամից կազմված հանձնաժողով: Նկատենք, որ դա բավարար է քվորում ապահովելու և հանձնաժողովի բնականոն գործունեությունն ապահովելու համար, ինչով էլ, թերևս, պայմանավորված է առկա թափուր պաշտոնների համալրման նպատակով ԱԺ դիմելու հարցում վարչապետի կողմից շտապողականություն չցուցաբերելու հանգամանքը:

Ինքնավար երկու մարմինների կազմերի ընտրության պարագայում կարելի է առանձնացնել մի քանի օրինաչափություն:

- 2 կառույցների նախագահներն էլ խորհրդարանական մեծամասնությունը ներկայացնող քաղաքական թիմի և գործող վարչապետի գլխավորած կառավարության անդամներ էին՝ նախարարի և փոխնախարարի կարգավիճակներով: Ընդ որում, եթե ՅԾԿՅ նախագահի պաշտոնում նշանակված Գարեգին Բաղրամյանի մասնագիտական նախկին գործունեությունը գլխավորապես կապված է եղել հենց այդ մարմնի հետ (2003-ից մինչև 2018թ. տարբեր կարգավիճակներով և պաշտոններ զբաղեցնելով աշխատել է Յանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում), ապա ՏՄՊՊՅ հանձնաժողովի նախագահի պարագայում քաղաքական բաղադրիչն ավելի շոշափելի էր, քանի որ Գեղամ Գևորգյանի գործունեությունը խիստ վերապահումով կարող է գնահատվել որպես տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող:
- Յաշվի առնելով հանձնաժողովների կազմերի թեկնածուներին տրված ձայների հարաբերակցությունը՝ կարելի է փաստել, որ ընտրություններն անցել են մեծ հաշվով առանց ներխորհրդարանական կոնսենսուսի կամ լայն քաղաքական համախոհության, ինչը կարևոր ցուցիչ է հատկապես ինքնավար, այսինքն՝ սկզբունքորեն քաղաքական կամ կոնյուկտուրային ազդեցություններից զերծ մարմիններ լինելու և դրանց նկատմամբ հանրային վստահության տեսանկյունից: Ընտրությունների արդյունքներն արտացոլել են հիմնականում քաղաքական մեծամասնությունը կազմող «Իմ քայլը» խմբակցության քաղաքական կամքը:

Սահմանադրական դատարանի դատավորի ընտրության ողիսականը

Սահմանադրական դատարանի դատավորները Ազգային ժողովի կողմից ընտրվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով և ունեն 12 տարվա պաշտոնավարման ժամկետ: Խորհրդարանը ՍԴ 3-ական դատավոր է ընտրում հանրապետության նախագահի, կառավարության և Դատավորների ընդհանուր ժողովի առաջարկություններով:

7-րդ գումարման ԱԺ 2-րդ նստաշրջանի ընթացքում ԱԺ-ում կատարվել է ՅՅ նախագահի քվոտայով առաջադրվող ՍԴ անդամի ընտրության երկու անհաջող փորձ: Ապրիլի 16-ին կայացած փակ գաղտնի քվեարկությամբ խորհրդարանը 24 կողմ, 75 դեմ ձայների հարաբերակցությամբ մերժել է Գոռ Յովհաննիսյանի թեկնածությունը, իսկ մայիսի 29-ին՝ 30 կողմ և 53 դեմ քվեների հարաբերակցությամբ՝ նաև հաջորդ թեկնածուին՝ ԵՊՅ իրավաբանական ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ամբիոնի վարիչ Արթուր Վաղարշյանին:

Քվեարկությունից երկու օր անց՝ մայիսի 31-ին, հանրապետության նախագահը, առանց մրցույթ հայտարարելու և, ըստ էության, խախտելով իր քվտայով ՍԴ անդամի թեկնածուների առաջադրման կարգը սահմանող կարգադրագիրը, առաջարկել է սահմանադրագետ, փաստաբան Վահե Գրիգորյանի թեկնածությունը, որն արդեն մեկ անգամ, նախորդ գումարման ԱԺ գործունեության ընթացքում՝ 2018թ. հոկտեմբերին, մերժվել էր պառակտված և փաստացի առանց մեծամասնության գործող խորհրդարանի կողմից:

Քննարկումների արդյունքում խորհրդարանը հունիսի 18-ին ձայների 99 կողմ, 22 դեմ հարաբերակցությամբ ՍԴ դատավոր է ընտրել Վահե Գրիգորյանին: «Բարգավաճ Հայաստան»-ը որոշում էր ընդունել, որ խմբակցության պատգամավորներն ազատ են քվեարկելու մեծամասնության լիակատար աջակցությունը վայելող թեկնածուի հարցում: «Լուսավոր Հայաստան»-ը հայտարարել էր Վահե Գրիգորյանի թեկնածությանը դեմ հանդես գալու մասին, սակայն ելույթների ընթացքում խմբակցության առանձին պատգամավորներ բաց տեքստով իրենց աջակցությունն էին հայտնում նրան:

Իրավիճակը փաստել է ՍԴ-նախագահի ինստիտուտ-ԱԺ հարաբերություններում մի քանի խորքային խնդիրների առկայությունը, որը ներպետական իրավական անվտանգության առումով որոշակի հարցադրումներ է հարուցում: Այս հանգամանքն ընդգծվել է հատկապես ՍԴ դատավորի պաշտոնն ստանձնելիս՝ ԱԺ-ում երդման արարողության ժամանակ, ՍԴ ձևավորման ու ՍԴ գործող կազմի լեգիտիմության և իր իսկ կողմից ՍԴ նախագահի պաշտոնն զբաղեցնելու հավակնության իրավական հիմքերի վերաբերյալ Վահե Գրիգորյանի՝ մեծ հանրային ու մասնագիտական ռեզոնանս առաջացրած հայտարարության ֆոնին:

2018թ. մայիսից սկսված գործընթացն ակնհայտ է դարձրել, որ Սահմանադրական դատարանի անդամների ընտրության և նշանակման իրավական մեխանիզմները լիարժեք չեն, ինչը գործնականում առաջացնում է մի իրավիճակ, երբ պետական իշխանության երկու՝ ՀՀ նախագահ-ԱԺ, սուբյեկտների կողմից իրենց լիազորությունների իրավաչափ գործադրումը կարող է հանգեցնել ՍԴ-ի չհամալրման պերմանենտ գործընթացի: Ըստ էության, առկա սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում հանրապետության նախագահը կարող է անվերջ ներկայացնել ՍԴ դատավորի նոր թեկնածուների, իսկ խորհրդարանն անվերջ չընտրել նրանց, կամ չընտրել այնքան ժամանակ, քանի դեռ ՀՀ նախագահը չի ներկայացրել քաղաքական մեծամասնությանը ցանկալի թեկնածություն:

Ի դեպ, նույն իրավիճակը տեսականորեն կարող է առաջանալ նաև ՍԴ դատավորի թեկնածուներ ներկայացնելու իրավասությամբ օժտված մյուս սուբյեկտների՝ կառավարության և Դատավորների ընդհանուր ժողովի պարագայում: Նման իրավական կազուսի առաջացման պատճառն այն է, որ այդ հարցում իրավահարաբերությունները կարգավորելիս օրենսդրությունը չի կառուցվել, այսպես կոչված, «առաջնային մանդատի» սկզբունքով, այսինքն՝ չի հստակեցվել, թե անհամաձայնությունների առաջացման դեպքում այդ ինստիտուտներից որի դիրքորոշումն է վճռորոշ: Այնքանով, որքանով վերջնական ընտրությունը կատարում է խորհրդարանը, ենթադրելի է, որ «առաջնային մանդատի» իրավունքը ևս պատկանում է խորհրդարանին:

Քաղաքական տրամաբանության տեսանկյունից ՀՀ Նախագահի կողմից ներկայացվող ՍԴ անդամի թեկնածությունները խորհրդարանում շարունակաբար մերժվելու իրավական սողանցքը դուրս է գալիս կոնկրետ թեկնածուների, նրանց որակական և մասնագիտական հատկանիշների նկատմամբ դիրքորոշումների տիրույթից և ուղղակիորեն սկսում է ընկալվել իբրև վերաբերմունք ՀՀ Նախագահի ինստիտուտի նկատմամբ: Այսինքն, պրոբլեմը հանգում է խորհրդարանի կողմից Նախագահի նկատմամբ վստահությանը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ ՀՀ Նախագահը ևս հանդիսանում է խորհրդարանի կողմից ընտրվող պաշտոնատար անձ: Մինչդեռ օրենսդրությունն այս կտրվածքով Նախագահի վստահության ճգնաժամի իրավական լուծման որևէ մեխանիզմ չի Նախատեսել:

Իրավական այս անորոշությունը կարող է փակուղային իրավիճակ ստեղծել, երբ, օրինակ, ՍԴ-ում թափուր մասն նիստերի անցկացման և որոշումների ընդունման քվորումի ապահովման համար անհրաժեշտ նվազագույն 5 և ավելի անդամների տեղերը: Նման՝ անգամ տեսական, հեռանկարի հնարավորությունը հարուցում է իրավական անորոշությունից ածանցվող ռիսկերը չեզոքացնելուն ուղղված քայլեր ձեռնարկելու, առկա օրենսդրական ու սահմանադրական բացերը լրացնելու անհրաժեշտություն:

Ստեղծված իրավիճակը փաստում էր, որ առկա է նաև թեկնածուների ընտրության չափորոշիչներն առավել հստակեցնելու անհրաժեշտություն՝ տվյալ դեպքում կապված ԱԺ-ի կողմից մեկ անգամ քվեարկությամբ մերժված թեկնածուին կրկին առաջադրելու իրավական հնարավորության հետ:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվում էր, որ եթե Ազգային ժողովում Սահմանադրական դատարանի դատավոր չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո՝ տասնօրյա ժամկետում, իրավասու մարմինը, տվյալ դեպքում ՀՀ Նախագահը, առաջադրում է նոր թեկնածու:

«Նոր թեկնածու» եզրույթը ենթադրում էր, որ ՍԴ դատավոր չընտրվելու դեպքում առաջադրվող թեկնածուն չէր կարող լինել նախկինում ԱԺ-ի կողմից երբևէ կամ առնվազն վերջին անգամ չընտրված անձը:

Ընդ որում, այս առումով ևս տվյալ իրավակարգավորումը որոշակիություն չէր պարունակում, քանի որ լայն մեկնաբանելիության հնարավորություն էր ստեղծում: Սակայն ՀՀ Նախագահի կողմից 2018թ. ՄԴ դիմելուց հետո ՄԴ-ն իր 2018 թվականի նոյեմբերի 6-ի ՄԴՈ-1434 որոշմամբ հակասահմանադրական ճանաչեց ԱԺ կանոնակարգի 141-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 7-րդ մասի երկրորդ նախադասությունը և 8-րդ մասը: ՄԴ նույն որոշման ուժով այդ նորմերը ուժը կորցրած էին ճանաչվում 2019 թ. ապրիլի 1-ից, ինչի արդյունքում այդ պահից դադարեց գործել ՄԴ դատավոր չընտրվելու դեպքում նախկինում քվեարկված և մերժված թեկնածու չներկայացնելու պահանջը: Այս իմաստով, Վահե Գրիգորյանի թեկնածության վերստին առաջադրման իրավական խոչընդոտները կարելի է համարել վերացված, քանի դեռ իրավական կանոնակարգման չի ենթարկվել հաջորդաբար թեկնածուներ ներկայացնելու ՀՀ Նախագահի իրավասությունը:

Սակայն ՄԴ այս որոշումը հանգեցնում է իրավական մեկ այլ անորոշության այն իմաստով, որ որպես ՄԴ դատավորի թեկնածու, նախկինում ԱԺ քվեարկությամբ մերժված անձին կրկին առաջարկելու հնարավորության ընձեռումը չի հստակեցնում այն հարցը, թե տեսականորեն արդյո՞ք ՀՀ Նախագահը կարող է անդադար ԱԺ-ին առաջարկել, օրինակ, միևնույն թեկնածուին կամ նախկինում ԱԺ-ի կողմից մերժված այլ թեկնածուների: Ապագայում իրավական կազուսային իրավիճակներից խուսափելու համար հրատապ է դառնում «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքում խնդրի կարգավորմանն ուղղված համապարփակ փոփոխությունների իրականացումը:

ԲԴԽ անդամների ընտրությունները

Բարձրագույն դատական խորհրդի 10 անդամներից 5-ին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով: Սահմանադրության 174-րդ հոդվածը հստակ ամրագրում է, որ խորհրդարանի կողմից ընտրված ԲԴԽ 5 անդամները պետք է լինեն մասնագիտական աշխատանքի առնվազն 15 տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականներ և այլ հեղինակավոր իրավաբաններ, որոնք, սակայն, չեն կարող լինել դատավորներ: Նկատի ունենալով, որ ԲԴԽ-ի մյուս 5 անդամները Սահմանադրությամբ սահմանված կարգով պետք է լինեն դատավորներ (ընդ որում՝ բոլոր ատյանների դատարանները ներկայացնող), որոնց ընտրում է Դատավորների ընդհանուր ժողովը, ակնհայտ է դառնում, որ նման մեխանիզմի ներդրման նպատակը մի կողմից դատական իշխանության բարձրագույն այս մարմնի անկախության մակարդակը ԱԺ-ում վստահության բավականին բարձր շեմի հաղթահարմամբ իրականացնելով երաշխավորելն է, մյուս կողմից՝ ի դեմս իրավաբան-գիտնականների, հանրային-մասնագիտական մասնակցության ապահովմամբ ԲԴԽ-ում դատավորների շահերը հավասարակշռելն ու հակակշռելը:

Խորհրդարանի կողմից ԲԴԽ անդամների ընտրության հարցում դրսևորված շտապողականությունը բացատրվում է նորաստեղծ այդ մարմնում ստեղծված աննախադեպ իրավիճակը հաղթահարելու անհրաժեշտությամբ:

Մայիսի 20-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր դատական իշխանությունների նկատմամբ հանրային անվստահության առկայության և այդ խնդիրը արմատապես լուծելու ոչ ստանդարտ մեխանիզմներ կիրառելու, մասնավորապես՝ դատավորների հրաժարականների, վեթինգի իրականացման քաղաքական որոշման մասին: Գործընթացի մեկնարկը տրվել էր այդ անվստահությունն առարկայորեն արտահայտելուն միտված՝ հանրապետության գրեթե բոլոր դատարանների մուտքերը մի քանի ժամով արգելափակելու ակցիայով: Հայտարարությանը և ակցիային հաջորդած մի քանի օրերի ընթացքում նախ հրաժարական էր տվել Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Գագիկ Հարությունյանը, ապա նաև ԲԴԽ 4 անդամներ՝ Գևորգ Դանիելյանը, Արմեն Խաչատրյանը, Սերգեյ Մեդրյանը, Արմեն Բեկթաշյանը: Նիստեր հրավիրելու և որոշումներ կայացնելու համար չունենալով քվորում՝ ԲԴԽ-ն զրկվել էր սահմանադրական լիազորություններն իրականացնելու հնարավորությունից:

10 օրվա ընթացքում՝ հունիսի 20-ից մինչև հուլիսի 1-ը, ԱԺ-ում առաջադրվել են ԲԴԽ անդամի 3 թեկնածուներ, քննարկումներն ու քվեարկություններն իրականացվել են արտահերթ նիստերի ռեժիմով: 3 թեկնածուներից 2-ը՝ Գրիգոր Բեքմեզյանը և Վիգեն Քոչարյանը, ստացել են խորհրդարանի վստահության քվեն, ինչով փաստացի հանգուցալուծվել է Բարձրագույն դատական խորհրդի իրավազորության խնդիրը և վերականգնվել վերջինիս գործունակությունը: 3-րդ թեկնածուն՝ Աննա Մարգարյանը, չի ընտրվել:

ԲԴԽ անդամների թեկնածությունների քննարկման և քվեարկությունների գործընթացում ակնհայտ դարձան մի քանի իրողություններ, որոնք հետագայում իրենց ազդեցությունն են ունենալու այս ինստիտուտին վերաբերող ԱԺ լիազորությունների իրացման որակի վրա:

ԲԴԽ-ում առաջացած աննախադեպ և իրավական անվտանգության տեսանկյունից խնդրահարույց իրավիճակը հնարավոր է եղել հաղթահարել ԱԺ-ում կայուն, բացարձակ մեծամասնության առկայության շնորհիվ: 3/5-րդ ձայների շեմի սահմանումը, իհարկե, բխում է նման առանցքային պաշտոններում ընտրություն կատարելու հարցում խորհրդարանական ուժերի կողմից կոնսենսուսային լուծումներով առաջնորդվելու, այսինքն, ԲԴԽ-ն բարձր քաղաքական լեգիտիմությամբ օժտված անդամներով համալրելու սկզբունքից: Միաժամանակ նման շեմի սահմանումը նմանատիպ իրավիճակներում կոնսենսուսի ձեռքբերումը էապես բարդացնող գործոն է, եթե նկատի ունենանք, որ ԱԺ կանոնակարգի 8-րդ և 144-րդ հոդվածներով սահմանվում է, որ ԲԴԽ անդամի թեկնածության առաջադրումը խմբակցություններին վերապահված իրավունք է, և յուրաքանչյուր խմբակցություն ունի մեկական թեկնածու առաջադրելու իրավունք: Զվեարկության են դրվում ներկայացված բոլոր թեկնածուները, իսկ դրանցից ոչ մեկի՝

սահմանված 3/5-ի շեմը չհաղթահարելու դեպքում անցկացվում է երկրորդ փուլ, որի անարդյունավետ լինելու դեպքում նշանակվում են նոր ընտրություններ: Ակնհայտ է, որ իրավակարգավորման հիմքում խորհրդարանական ուժերի միջև որոշակի համախոհության ձևավորման կոնցեպցիան է:

Քաղաքական մեծամասնության՝ 3/5-ի շեմի հաղթահարումն ապահովող ներկայացվածությունը լուծում է այդ խնդիրը:

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ վերոնշյալ իրողությունն առաջացնում է առանց խորհրդարանական ընդդիմության գործոնը հաշվի առնելու հարցի լուծման պրակտիկայի ձևավորման ռիսկ: Բոլոր երեք թեկնածություններն էլ առաջադրվել էին «Իմ քայլը» խմբակցության կողմից: Առաջին երկուսի՝ Գրիգոր Բեքմեզյանի և Վիգեն Քոչարյանի դեպքում խորհրդարանական ընդդիմությունը ներկայացնող 2 խմբակցությունները լիարժեք աջակցություն էին հայտնել՝ հրաժարվելով օգտվել այլընտրանքային թեկնածուներ առաջադրելու իրենց իրավունքից: Քաղաքական մեծամասնության թեկնածուների շուրջ ձևավորվել էր քաղաքական կոնսենսուս՝ առաջնահերթորեն հաշվի առնելով նրանց մասնագիտական ունակությունները, քաղաքական չեզոքության հանգամանքը: Սակայն ԲԴԽ երրորդ անդամի թեկնածուի հարցի քննարկման դեպքում, ինչպես պարզ դարձավ «Լուսավոր Չայաստան» խմբակցության անդամ Գևորգ Գորգիսյանի՝ ԱԺ ամբիոնից արված հայտարարությունից, այս խմբակցությունը նախնական քննարկումների փուլում առաջարկել էր այլընտրանքային թեկնածու, որը, սակայն, քաղաքական մեծամասնությունը մերժել էր: «Լուսավոր Չայաստան»-ը հրաժարվել էր այդ թեկնածությունը պաշտոնապես առաջադրելուց, քանի որ մեծամասնության նման դիրքորոշման պայմաններում դա անիմաստ էր համարել: Առջևում ԲԴԽ անդամի նոր ընտրություններ են, որոնք կարող են հստակեցնել, թեարդյոք «Իմ քայլը» կփորձի քաղաքական բանակցությունների միջոցով թեկնածության առաջադրման հարցում ներխորհրդարանական լայն համախոհություն ձևավորել: Դա կարևոր է հատկապես այն տեսանկյունից, որ խոսքը վերաբերում է դատական իշխանության մարմնի ձևավորմանը, որի պարագայում թեկնածուների ընտրությունը ենթադրում է բացառապես մասնագիտական չափորոշիչների կիրառում:

Կառավարության անդամներին, անկախ կառույցների ղեկավարներին խորհրդարան հրավիրելու պրակտիկան

7-րդ գումարման խորհրդարանի 2-րդ նստաշրջանում ձևավորվել է տարբեր պետական մարմինների ղեկավարներին ԱԺ խմբակցություններ, մշտական հանձնաժողովներ հրավիրելու և բաց կամ փակ ռեժիմով պատգամավորների հետ հանդիպումներ անցկացնելու պրակտիկա: Այն հիմնավորվել է խորհրդարանական վերահսկողությունը և պետական կառույցների հաշվետվողականությունը լրացուցիչ միջոցներով ապահովելու անհրաժեշտությամբ:

Նման ինստիտուտ՝ համապատասխան ընթացակարգային կարգավորումներով, ԱԺ կանոնակարգով նախատեսված չէ. հանդիպումների կազմակերպման հիմքում եղել են պատգամավորների, հանձնաժողովների, խմբակցությունների նախաձեռնողականությունը և հրավիրվող կողմի պատրաստակամությունը:

- Նստաշրջանի ընթացքում խմբակցությունների հրավերով խորհրդարան է եկել 11 պաշտոնյա, այդ թվում՝ ԱԶ նախագահ Բակո Սահակյանը և ԶԶ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Ամենաշատ հանդիպումներ կազմակերպել է «Իմ քայլը» խմբակցությունը՝ 9, 1-ական հանդիպում՝ «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» խմբակցությունները:
- Եվս 3 պաշտոնյա՝ արդարադատության նախարարը, գլխավոր դատախազը, մարդու իրավունքների պաշտպանը խորհրդարան են հրավիրվել մշտական հանձնաժողովների կողմից: Բարձրաստիճան պաշտոնյաներից միայն մեկը՝ ԲԴԽ նախագահն է մերժել ԱԺ-ում հանդիպման հրավերը:
- «Իմ քայլի» հրավերով խորհրդարան են եկել տարածքային կառավարման և զարգացման, առողջապահության, արտաքին գործերի, ֆինանսների, տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարները, պետական եկամուտների կոմիտեի նախագահը, ոստիկանապետը:
- Նստաշրջանի ավարտին խմբակցությունը փակ հանդիպման է հրավիրել մարզպետերին:
- Վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Իմ քայլի» հրավերով Ազգային ժողովում 2 անգամ մասնակցել է խմբակցության փակ նիստին: Առաջին հանդիպման առանցքում եղել է կառավարության անդամների ամանորյա պարզևաճարների թեման, երկրորդում՝ խմբակցության խորհրդարանական գործունեությունը:
- Նստաշրջանի ընթացքում «Իմ քայլը» խմբակցության հրավերով խորհրդարան է եկել նաև Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը: ԱԶ նախագահի այցին նախորդել էին Նիկոլ Փաշինյանի՝ բանակցային գործընթացին և Արցախի իշխանություններին վերաբերող հայտարարությունները:
- «Բարգավաճ Հայաստան» խմբակցության հրավերով Ազգային ժողով է եկել ՊԵԿ նախագահ Դավիթ Անանյանը, իսկ «Լուսավոր Հայաստանը» հանդիպման է հրավիրել արտգործնախարար Չոհրապ Մնացականյանին:
- Բոլոր հանդիպումները անցել են դռնփակ:

Բարձրաստիճան պաշտոնյաներին ԱԺ հրավիրելու պրակտիկան եղել է նաև նախորդ գումարումներում, հանդիպումները, սակայն, ուղենիշային բնույթ չեն ունեցել և պայմանավորված են եղել առանձին հարցերի շուրջ կոնկրետ իրավիճակում գործադիր իշխանության համապատասխան իրավասու պետական մարմնի ղեկավարից պարզաբանումներ ստանալու անհրաժեշտությամբ: 7-րդ գումարման 2-րդ նստաշրջանում այս ձևաչափի հանդիպումները ունեցել են շարունակական և ընդգրկուն բնույթ՝ ներառելով ոչ միայն գործադիր, այլ նաև դատաիրավական ոլորտները ներկայացնող մարմինները:

Նման ձևաչափը խորհրդարանական վերահսկողական գործառույթի նոր բաղադրիչի վերածվելու, իշխանության մյուս թևերի հանրային հաշվետվողականության մակարդակը բարձրացնելու, պառլամենտ-գործադիր իշխանություն, պառլամենտ դատական իշխանություն հարաբերությունների նոր մշակույթի ձևավորելու նախադրյալներ է պարունակում: Այսուհարդերձ, որպես նոր պրակտիկա՝ կառուցակարգը արդյունավետության, նպատակայնության տեսանկյունից որոշակի կանոնակարգումների կարիք ունի:

- Սահմանադրությունը և ԱԺ կանոնակարգ օրենքը նախանշում են պառլամենտական վերահսկողության շրջանակները, այդ գործառույթի իրացման իրավական մեխանիզմներն ու գործիքակազմը: Խմբակցությունների և հանձնաժողովների իրավասությունների շրջանակը սահմանող իրավական նորմերով նման կայուն, շարունակական հանդիպումների շարքի նախաձեռնության մեխանիզմ, առավել ևս հրավիրվող կողմի մասնակցության պարտավորություն ամրագրված չէ, թեև արգելման կամ բացառման իրավական հիմքեր ևս առկա չեն: Այսինքն, հանդիպումները կայացել են առանձին պատգամավորների, հանձնաժողովների, քաղաքական մեծամասնությունը ներկայացնող խմբակցության նախաձեռնողականության և հրավիրվող կողմի պատրաստակամության, բարի կամքի դրսևորման հիման վրա:

Այդ հանգամանքը խնդրահարույց է ոչ այնքան հանդիպումների իրավաչափության, որքան արդյունավետության տեսանկյունից: Հանդիպումների չնորմավորվածությունը իրավական հիմք չի տալիս հրավիրվող կողմի չներկայանալը որպես պառլամենտական վերահսկողական գործառույթն անտեսելու, հաշվետվողականությունից խուսափելու դրսևորում գնահատելու համար:

Հարկ է նկատել, որ կառավարության անդամների պարագայում գործում են ԱԺ հաշվետվողականության այլ մեխանիզմներ, իսկ դատաիրավական ոլորտի մարմինները օժտված են իշխանությունների տարանջատման, իրենց գործունեությանը իշխանության որևէ թևի կողմից միջամտության անթույլատրելիության հիմնարար սկզբունքներով երաշխավորված պաշտպանությամբ:

Ընդ որում՝ եթե գլխավոր դատախազը, ՄԻՊ-ը տարին մեկ անգամ խորհրդարանին հաղորդում են ներկայացնում իրենց գործունեության վերաբերյալ, ինչը պատգամավորներին տալիս է իրենց մտահոգող հարցերը բարձրացնելու հնարավորություն, ապա, օրինակ, ԲԴԽ նախագահը որևէ նման պարտավորություն չունի, ԱԺ-ն առհասարակ զրկված է ԲԴԽ անդամներին հետ կանչելու լիազորությունից:

Առանց անհրաժեշտ կանոնակարգման՝ նման ձևաչափով հանդիպումները կարող են ոչ միայն դառնալ ինքնանպատակ՝ ձևախեղելով խորհրդարանական վերահսկողության իրական նշանակությունը, այլև տալ այդ նախաձեռնությունները որպես իշխանության թևերի հակակշռման և անկախության սկզբունքի խախտում և պառլամենտական վերահսկողական գործառույթի չարաշահում որակելու հնարավորություն:

- Հանդիպումների մեծ մասն անցել է դռնփակ՝ առանց շահագրգիռ այլ կողմերի և ՉԼՍ ներկայացուցիչների մասնակցության: Նման ձևաչափը որոշվել է կողմերի պայմանավորվածությունների արդյունքում: Եթե որոշ դեպքերում, ինչպես, օրինակ, գլխավոր դատախազի, արտգործնախարարի, ոստիկանապետի հետ հանդիպումներում, փակ ռեժիմի նախընտրությունը ոչ միայն տրամաբանական է, այլև պարտադիր, ապա անհասկանալի է, թե ինչ սկզբունքով են փակ անցկացվել մյուս հանդիպումները. խմբակցությունների կողմից որևէ հիմնավոր պատճառաբանություն չի ներկայացվել: Մյուս կողմից՝ հանդիպումներին հաջորդող օրերին մամուլում տեղ են գտել դրանց բովանդակության մանրամասներին վերաբերող հրապարակումներ, որոնք չեն հերքվել: Այսինքն ակնհայտ է, որ «փակ» կոչվող հանդիպումներն ուղեկցվել են տեղեկատվական արտահոսքերով՝ իմաստազրկելով դրանք դռնփակ անցկացնելու որոշումը:

Փակ են անցել նաև վարչապետի 2 հանդիպումները «Իմ քայլը» խմբակցության հետ: Հանդիպումների փաստը հաստատելուց բացի՝ դրանց անհրաժեշտության, բովանդակության վերաբերյալ հավելյալ մանրամասներ չեն հաղորդվել: Հանդիպումների բաց ռեժիմը կամ առնվազն դրանց նաև ընդդիմադիր խմբակցությունների մասնակցությունը կարող էր ստեղծել տեղեկատվական արտահոսքերից, որոշ հարցերի շուրջ անորոշություններից խուսափելու երաշխիքներ:

- Ըստ էության, աննախադեպ էր խորհրդարանում Արցախի Հանրապետության նախագահի հետ «Իմ քայլը» խմբակցության փակ հանդիպումը: Արցախի նախագահները ԱԺ հրավիրվել են պաշտոնական միջոցառումների շրջանակում, արարողակարգի բոլոր կանոններին համապատասխան: Մինչդեռ տվյալ դեպքում հանդիպումը, կարելի է ասել, աշխատանքային էր, որի ընթացքում, դատելով սահմանափակ տեղեկատվությունից, քննարկվել են Հայաստանի և Արցախի իշխանությունների հարաբերություններին, Որբերտ Քոչարյանի քրեական գործով Բակո Սահակյանի կողմից ներկայացված միջնորդությանը վերաբերող հարցեր:

Նման ձևաչափով հանդիպման մասնակցելու հրավերը չմերժելով՝ ԱՅ-ի նախագահը քաղաքական հարթությունում խնդիրները հարթելու, առկա որոշակի լարվածությունը թողափելու պատրաստակամություն է ցուցաբերել: Այսինքն, հանդիպումը ոչ թե վերահսկողական, այլ քաղաքական նշանակություն ունեւորող, որին առավել ընկալելի կլինեն խորհրդարանական բոլոր խմբակցությունների մասնակցությունը:

Այս ձևաչափով հանդիպումներին նստաշրջանի ընթացքում հրավիրվել են մասնավորապես ՅՅ առողջապահության նախարարը, ՅՅ արտաքին գործերի նախարարը, ՅՅ ֆինանսների նախարարը, ՅՅ նախկին տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարը, ՅՅ արդարադատության նախարարը, ՅՅ պետական եկամուտների կոմիտեի նախագահը, ՅՅ ոստիկանապետը, ՅՅ մարդու իրավունքների պաշտպանը, ՅՅ գլխավոր դատախազը, ՅՅ Բարձրագույն դատական խորհրդի նախկին նախագահը (վերջինս հրաժարվել է ներկայանալ) և այլոք: Ընդ որում՝ այդ հանդիպումները հրավիրվել են տարերայնորեն, առանց որևէ հստակ սկզբունքի և միայն ներուրոտային կոնկրետ կամ ընդհանուր խնդիրներ քննարկելու համար:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ. ՄԻՏՈՒՄՆԵՐ և ՊՐԱԿՏԻԿԱ

Աժ կանոնակարգ օրենքով⁸ սահմանվում է, որ խորհրդարանական լսումներ հրավիրելու իրավունք ունի խորհրդարանական երեք մարմին՝ Աժ նախագահը, մշտական հանձնաժողովը և խմբակցությունը: Եթե Աժ նախագահն իրավասու է լսումներ հրավիրել իր համար նախընտրելի ցանկացած հարց քննարկելու նպատակով (որևէ սահմանափակում օրենքը չի նախատեսում), ապա մշտական հանձնաժողովները կարող են խորհրդարանական լսումներ անցկացնել իրենց վերապահված ոլորտներին վերաբերող հարցերով: Ժամանակավոր հանձնաժողովներն ընդհանուր առմամբ զրկված են այդ հնարավորությունից. բացառություն է առանձին օրենքի նախագծի հարցով ստեղծված ժամանակավոր հանձնաժողովը⁹:

Խորհրդարանական խմբակցություններն իրավասու են լսումներ հրավիրել միայն իրենց կամ խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորի առաջադրած նախագծի շուրջ: Ի տարբերություն Աժ նախագահի և մշտական հանձնաժողովների՝ խմբակցությունները չեն կարող մեկ նստաշրջանի ընթացքում մեկից ավելի լսումներ հրավիրել: Լսումներ հրավիրվում են բացառապես նշված սուբյեկտների հայեցողությամբ՝ առանց օրենսդրության իմպերատիվ պահանջի:

⁸ Աժ կանոնակարգ օրենք, հոդված 125

⁹ Աժ կանոնակարգ, հոդված 16. Ժամանակավոր հանձնաժողովի ստեղծումը

7-րդ գումարման Ազգային ժողովում լսումներ հրավիրելու իրենց իրավունքը իրացրել են խորհրդարանական 15 սուբյեկտներից միայն 5-ը. ԱԺ նախագահը և 4 մշտական հանձնաժողով՝ 11-ից. մշտական հանձնաժողովներից 7-ը և ԱԺ 3 խմբակցությունները նստաշրջանի ընթացքում լսումներ չեն հրավիրել:

ԱԺ նախագահը նստաշրջանի ընթացքում 1 լսում է հրավիրել «Անցումային արդարադատության գործիքների կիրառման հեռանկարները Հայաստանում» թեմայով:

Հանձնաժողովներից 1-ական լսումներ են անցկացրել՝

- Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը՝ «ՀՀ նախագահության տարին ԵԱՏՄ-ում. մարտահրավերներ և հնարավորություններ» թեմայով,
- Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը՝ «Կինոյի ոլորտում օրենսդրական հնարավոր լուծումների վերաբերյալ» թեմայով,
- Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովը՝ ՄԱԿ-ի գրասենյակի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աջակցությամբ՝ «Մարդու իրավունքների ազգային օրակարգ. ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկում» թեմայով,
- Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը՝ «Հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ կից օրենքների նախագծերի փաթեթի շուրջ:

Պրակտիկա և միտումներ

2-րդ նստաշրջանում լսումների ինստիտուտի գործարկման մեխանիզմները իրացրել է դրա իրավունքն ունեցող սուբյեկտների միայն 1/3-ը: ԱԺ մշտական հանձնաժողովների, խմբակցությունների պասիվությանը որոշակիորեն նպաստել է հանգամանքը, որ յուրաքանչյուր նստաշրջանում առնվազն 1 լսում հրավիրելու իմպերատիվ պահանջն այլևս չի գործում, և նախաձեռնողականությունը թողնվել է հանձնաժողովների և խմբակցությունների հայեցողությանը:

Աժ խմբակցությունները չեն օգտվել սեփական նախագծերի շուրջ լուսմեր կազմակերպելու իրավունքից, ինչը հատկապես քաղաքական փոքրամասնությունը ներկայացնող խմբակցություններին կարող էր տալ դրանք հանրայնացնելու, դրանց կարևորության և նպատակների շուրջ հանրային համախոհության դաշտ ստեղծելու հնարավորություն: Նկատենք, որ Աժ կանոնակարգը չի հստակեցնում, թե խոսքը հատկապես ինչպիսի նախագծերի մասին է, ինչը նշանակում է, որ խմբակցությունները կարող են ոչ միայն օրենքների նախագծերը, այլ նաև շրջանառության մեջ դրված Աժ որոշումների, հայտարարությունների, ուղերձների նախագծերը դարձնել լուսմերի առարկա՝ այդպիսով ազդելով քաղաքական, հասարակական օրակարգի վրա:

Սրանով հանդերձ՝ խմբակցություններն ու հանձնաժողովները հանրային քննարկումներ նախաձեռնելու գործառույթից ամբողջությամբ չեն հրաժարվել: Նրանք ակնհայտ ակտիվություն են դրսևորել այլ, Աժ կանոնակարգով չնախատեսված ձևաչափերով:

Օրինակ, Աժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը մասնագետների ներգրավմամբ 2 քննարկում է հրավիրել մշակույթի ոլորտում գնումների գործընթացի թեմայով, որը, սակայն, չի իրականացվել խորհրդարանական լուսմերի՝ օրենքով սահմանված ընթացակարգերով: Տվյալ դեպքում էական է հանգամանքը, որ հանձնաժողովը հետևողականություն և շարունակականություն է դրսևորել կոնկրետ համակարգային նշանակության հիմնահարցի համակողմանի քննարկման և լուծումներ գտնելու հարցում:

Նույնը կարելի է ասել ԲՀԿ խմբակցության մասին: Խմբակցությունը նախապես հայտարարել էր «Իրացման գոտիներ՝ առկա խնդիրներ եւ հնարավոր լուծումներ» խորագրով լուսմեր կազմակերպելու մասին, սակայն ավելի ուշ բավարարվել է միայն Աժ փոխնախագահ, խմբակցության անդամ Վահե Էնֆիաջյանի և Երևան քաղաքի՝ հանրային գերակա շահ ճանաչված տարածքների մի խումբ բնակիչների հանդիպումը կազմակերպելով:

ԲՀԿ-ն լայն մասնակցային քննարկում է կազմակերպել նաև Սևանա լճի Էկոհամակարգի տրանսֆորմացիաների շուրջ՝ «Սևանի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայով, որին մասնակցել են պատգամավորներ, գործադիր մարմնի, ինչպես նաև բնապահպանական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ներկայացուցչական կազմով և քննարկման ընթացակարգով միջոցառումը լիարժեք համապատասխանում էր լուսմերի ձևաչափին, սակայն խմբակցությունն այն հրավիրել էր որպես աշխատանքային քննարկում: Այս հանգամանքը, թերևս, պայմանավորված էր միայն իրենց նախագծերի շուրջ խորհրդարանական լուսմեր կազմակերպելու՝ խմբակցություններին տրված սահմանափակ հնարավորությամբ:

Այս հանգամանքները փաստում են լսումների ինստիտուտի կենսունակության և պահանջարկվածության մասին: Միաժամանակ, դրանք ցույց են տալիս, որ ԱԺ կանոնակարգ օրենքով և ԱԺ աշխատակարգը հաստատելու մասին որոշմամբ սահմանված մեխանիզմները, ձևաչափերը սահմանափակող դեր են կատարում՝ տալով այդ իրավակարգավորումները շրջանցելու հնարավորություն:

Անցկացված 5 լսումների բովանդակությունը վկայում է, որ որոշակիորեն պահպանվում է թեմաների արդիականության, հրատապության հետ կապված խնդիրը: 5 լսումներից միայն երկուսն են (ԱԺ տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնած «ՀՀ նախագահության տարին ԵԱՏՄ-ում. մարտահրավերներ և հնարավորություններ» թեմայով և Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կազմակերպած «Հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ կից օրենքների նախագծերի փաթեթի շուրջ) ամբողջությամբ համարժեք եղել տվյալ պահի հասարակական-քաղաքական օրակարգին, հետևաբար, նաև իրենց շուրջ կենտրոնացրել լայն հանրության ուշադրությունը, մեծացրել այդ լսումների պրակտիկ նշանակությունը: Մյուս 3 դեպքերում թեև լսումների առարկա հանդիսացած հարցերը եղել են խորքային, համակարգային ընդգրկման, հետևաբար, նաև՝ ոչ ձևական, սակայն բոլոր դեպքերում արդիականության և օրակարգային ադեկվատության տեսանկյունից որոշակիորեն զիջել են մյուս 2-ին:

Լուրջ խնդիր է շարունակում մնալ լսումների հրավիրման արդյունավետության չափորոշիչների անհստակությունը: Գործնականում չկան լսումների առարկա հարցի վերաբերյալ կայացվող կոնկրետ քաղաքական որոշումների, մշակվող նախագծերի վրա լսումների ընթացքում արված մասնագիտական, փորձագիտական, գիտական, քաղաքական բնույթի դիտողությունների, առաջարկությունների, նկատառումների ազդեցությունը որոշակիացնելու մեխանիզմներ, իսկ մյուս կողմից չեն պահպանվում լսումների արդյունքների ամփոփմանը կոչված ԱԺ կանոնակարգ օրենքով նախատեսված պահանջները: ԱԺ կանոնակարգի 125-րդ հոդվածով սահմանված է, որ լսումների արդյունքում կազմված արձանագրությունը հաստատվում է լսումները հրավիրած մարմնի որոշմամբ և տեղադրվում է ԱԺ պաշտոնական կայքում: Այսինքն, այս նորմի տրամաբանությունից բխում է, որ լսումների արդյունքում պետք է կազմվի դրա բովանդակության վերաբերյալ արձանագրություն՝ անկախ նույնիսկ այն հանգամանքից, թե որքանով կարող է այն ծառայել իր խորհրդապահական-խորհրդատվական նպատակին:

ԱԺ աշխատակարգի 90-րդ մասով նախատեսվում է, որ լսումներ հրավիրող Ազգային ժողովի նախագահը, հանձնաժողովը կամ խմբակցությունը կարող են նախապատրաստել իրենց հրավիրած լսումների թեմայի վերաբերյալ ներկայացված գրավոր ելույթներ, առաջարկներ, եզրակացություններ, տեղեկանքներ, ինչպես նաև լսումների արդյունքներն ամփոփող այլ նյութեր, որոնք կարող են հրապարակվել հանձնաժողովի կամ խմբակցության առաջարկությամբ՝ ԱԺ նախագահի համաձայնությամբ:

Այս կառուցակարգի իրական նշանակությունը լուսմներն ավելի գործնական, օգտակար և ինֆորմատիվ դարձնելն է: Մինչդեռ նստաշրջանի ընթացքում հրավիրված 5 լուսմներից ոչ մեկի դեպքում ոչ միայն նման նյութեր չեն հրապարակվել, այլև անգամ ԱԺ կայքի համապատասխան բաժիններում չեն հրապարակվել լուսմների արձանագրությունները: Միակ տեղեկատվությունը, որ առկա է այդ բաժիններում, լուսմների հրավիրման մասին իրազեկող հայտարարություններն են, լավագույն դեպքում՝ լուսմեր անցկացնելու վերաբերյալ հանձնաժողովների կայացրած որոշումները:

Չարկ է նշել, որ նախորդ գումարման խորհրդարանն ամեն ինչ արել է, որպեսզի լուսմների արդյունքների հավաքագրմանը և հանրայնացմանը միտված իրավակարգավորումները որքան հնարավոր է զրկվեն որոշակիությունից, դառնան հայեցողական և ձևական: Մասնավորապես ԱԺ աշխատակարգի 90-րդ մասը 2018թ. ապրիլին կատարված փոփոխություններով ենթարկվել է էական խմբագրման: Նախկին ձևակերպումներով, մասնավորապես, ԱԺ աշխատակազմը լուսմների արդյունքում կազմված արձանագրությունն ստանալուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում պետք է այն տեղադրի ԱԺ պաշտոնական կայքում: Կատարված փոփոխության արդյունքում այս պահանջն ուղղակի վերացվել է, իսկ դրույթն ստացել է այնպիսի բովանդակություն, որ լուսմների արդյունքներն ամփոփող նյութերը կարող են հրապարակվել ԱԺ նախագահի համաձայնությամբ, հրավիրող սուբյեկտի հայեցողությամբ: Ընդ որում՝ ոչ մի հստակեցում չի արվում ոչ միայն ժամկետների, այլև հրապարակման ձևի և վայրի տեսանկյունից:

Այս իմաստով պրակտիկայի էական փոփոխություն չի արձանագրվել, ինչը ևս վկայում է, որ չնայած որպես ինստիտուտ՝ խորհրդարանական լուսմների կայացման առկա միտումներին՝ դրա պրակտիկ նշանակությունն ու արդյունավետությունը բարձրացնելու պահանջը մտում է ոչ ցանկալի մակարդակի վրա:

ԷԹԻԿԱ ԵՎ ՇԱՅԵՐԻ ԲԱԽՈՒՄ. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՉԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

7-րդ գումարման ԱԺ 2-րդ նստաշրջանի ընթացքում Էթիկայի ժամանակավոր հանձնաժողով չի ստեղծվել, կանոնակարգային ընթացակարգերով Էթիկական որևէ հարց չի քննարկվել, որևէ վարույթ չի իրականացվել: Պատկերն այսպիսին է ԱԺ կանոնակարգ - օրենքի ընդունումից ի վեր:

Էթիկական վարքագծով նոր խորհրդարանը տարբերվում է նախորդներից՝ պայմանավորված հանգամանքով, որ դրանում նվազել են հակաէթիկական վարքագիծ դրսևորող պատգամավորները: Սակայն տվյալ դեպքում Էթիկական խախտումների հարցի ֆորմալ քննարկումների ընթացակարգ չհարուցվելու հիմնական պատճառը ոչ թե դա է՝ հաշվի առնելով, որ նստաշրջանի ընթացքում առնվազն 2 անգամ հրապարակայնորեն դրսևորվել է Էթիկայի հանձնաժողով ձևավորելու հանրային նախաձեռնություն, այլ այն ինստիտուցիոնալ իրավակարգավորումները, որոնք ամբողջացնում են Էթիկայի նորմերի պահպանման և դրանք ուսումնասիրության առարկա դարձնելու հետ կապված հարաբերությունները:

Նախ՝ Էթիկայի նորմերի խախտման հարցի հարուցումը դրվել է քաղաքական հարթության վրա. վերացվել է գործնականում ողջ գումարման տևողությամբ տարբեր համամասնություններով ձևավորվող Էթիկայի հանձնաժողով ունենալու համակարգը, փոխարենը Էթիկայի հանձնաժողովը ձեռք է բերել ժամանակավոր հանձնաժողովի կարգավիճակ, որը կարող է ձևավորվել միայն կոնկրետ դեպքի առթիվ՝ ԱԺ որոշմամբ, և կոնկրետ այդ իրավիճակից բխող լիազորություններով, պարտականություններով: Ընդ որում՝ Էթիկայի հանձնաժողով ձևավորելու նախաձեռնությամբ հանդես գալու իրավասությունը վերապահվել է բացառապես ԱԺ խմբակցություններին՝ առանց վարույթ հարուցելու կամ հարցը քննության առարկա դարձնելու իրավական չափորոշիչներ, շեմեր սահմանելու:

ԱԺ կանոնակարգ օրենքի 16-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ «Ժամանակավոր հանձնաժողովն ստեղծվում է Ազգային ժողովի որոշմամբ, որի նախագիծը ներկայացնելու իրավունքն ունի խմբակցությունը»: Էթիկայի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու իրավունքը բացառապես խմբակցությունների քաղաքական հայեցողությանը թողնելը այդ հարցում խորհրդարանական մեծամասնության քաղաքական դերն ու ցանկությունը փաստացի դարձրել է վճռորոշ:

Քանի որ էթիկայի ժամանակավոր հանձնաժողովի ստեղծումն ուղիղ կախված է ԱԺ մեծամասնության կամքից, էթիկական նորմերի խախտման հարց հարուցելու պատգամավորների, քաղաքացիների կամ քաղաքական, հասարակական միավորումների նախաձեռնությունը դարձել է միջնորդավորված, մինչդեռ նախկինում բոլորը կարող էին էթիկայի հանձնաժողովին դիմել պատգամավորի էթիկայի հարցերով: Հանրային սեկտորի կողմից պատգամավորների բարեվարքության խնդրի առաջադրման, հետևապես նաև վերահսկողության ընթացակարգը ոչ միայն կրկնակի բարդացել է՝ գործնականում հող նախապատրաստելով ցանկացած դեպքում նման հարցի նախաձեռնումը տապալելու կամ քաղաքական շահարկման առարկա դարձնելու համար, այլ նաև խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում նվազագույնի են հասցվել քաղաքացիների, քաղաքացիական հասարակության կողմից պատգամավորների բարոյաէթիկական վարքագծի վրա ազդելու, այն վերահսկելու լծակները:

Այս իրավական խոչընդոտները 3 անգամ ցայտուն դրսևորվել են 2-րդ նստաշրջանի ընթացքում:

Տեղեկանք. Ապրիլի 6-ին տասնյակից ավելի հասարակական կազմակերպություններ միասնական հայտարարությամբ ԱԺ նախագահին և պատգամավորներին կոչ են արել ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Չոհրաբյանի վարքագիծը քննարկման առարկա դարձնել ԱԺ էթիկայի հանձնաժողովի ձևաչափով: Ապրիլի 5-ին ԱԺ մարդու իրավունքների և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնած «Մարդու իրավունքների ազգային օրակարգ. ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկում» խորհրդարանական լսումներում Նաիրա Չոհրաբյանի խոսքը՝ հաջորդած «Իրավունքի կողմ» ՀԿ նախագահ, տրասնգենդեր կին Լիլիթ Մարտիրոսյանի ելույթին, ՀԿ-ները գնահատում էին որպես «խտրական եւ մարդու արժանապատվությունը նվաստացնող»:

ՀԿ-ների հայտարարությունը որևէ պատշաճ գնահատականի չի արժանացել: Նախկին կառուցակարգերի պայմաններում այդ կազմակերպությունները կարող էին ուղիղ դիմել էթիկայի հանձնաժողովին, որը պետք է որոշում կայացներ վարույթ ընդունել-չընդունելու, իսկ ընդունելու դեպքում՝ նաև պատգամավորի գործողություններում էթիկայի նորմերի խախտում լինելու կամ չլինելու վերաբերյալ համապատասխան եզրակացությունը ներկայացնելու խորհրդարան:

Տեղեկանք. «Քաղաքացու որոշում» կուսակցությունը ԱԺ 3 խմբակցությունների ղեկավարներին կոչ է արել Գագիկ Ծառուկյանի պատգամավորական էթիկայի խախտումներին առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ ԱԺ եզրակացություն ներկայացնելու համար հանդես գալ ԱԺ ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու նախաձեռնությամբ:

Առիթը ներմուծվող ցեմենտի համար պետական տուրքի սահմանմանը վերաբերող խորհրդարանական քննարկումների ընթացքում ԲՀԿ Գագիկ Ծառուկյանի արած հայտարարություններն էին: ԶՈ-ն դրանցում տեսել էր պատգամավորի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանադրական արգելքի խախտման, «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի երրորդ մասի 4-րդ կետով սահմանված պատգամավորական էթիկայի կանոնը խախտելու դրսևորում:

ԶՈ հայտարարությունը բուն քաղաքական դեբատներ հարուցեց խորհրդարանական և արտախորհրդարանական ուժերի շրջանում, անգամ ԱԺ նախագահի կողմից հայտարարությամբ հանդես գալու պատճառ հանդիսացավ, սակայն ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու որևէ նախաձեռնություն ԱԺ-ում հանդես չբերվեց՝ պատճառաբանությամբ, թե ԶՈ-ն ինդրի առնչությամբ հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել իրավապահ մարմիններին, և անհրաժեշտ է սպասել իրավական գնահատականներին: ՀԶԾ-ն հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժեց, թեպետ քրեական վարույթի դադարեցումը չէր կարող պատգամավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը կաշկանդող հանգամանք հանդիսանալ: Հարցը եզրափակվեց ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի՝ Գագիկ Ծառուկյանին ուղղված կոչ-հայտարարությամբ՝ հետևյալ նախաբանով. «...Նկատելով, որ գործող իրավակարգավորումները լայն քաղաքական հայեցողություն են սահմանում էթիկայի հանձնաժողովի ստեղծման և գործունեության առումով և կարող են տարատեսակ շահարկումների տեղիք տալ...»:

Տեղեկանք. Լրագրողական կազմակերպությունները «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանից պահանջել են պաշտոնապես ներողություն ինդրել լրագրողներից: Հունիսի 19-ին խորհրդարանում պատասխանելով օրենքին ենթարկվելու մասին լրագրողի հարցին՝ Գագիկ Ծառուկյանն ասել էր. «Հենց դու քո ցեղով գնա օրենքին ենթարկվի»: Մեկ ուրիշ լրագրողի էլ, որի հարցը դուր չէր եկել, ԲՀԿ նախագահը սպառնացել էր, թե՛ դեռ պատասխան է տալու: Կազմակերպությունները ԱԺ ղեկավարությունից պահանջել են քննարկման առարկա դարձնել Գագիկ Ծառուկյանի վարքագիծը լրագրողների նկատմամբ և գնահատական տալ դրան՝ պատգամավորական էթիկայի տեսանկյունից:

Վերոնշյալ դեպքերը հիմնավորում են էթիկայի վարքականոսների ֆունկցիոնալ դերը բարձրացնելու և կայուն, մշտական հիմունքներով գործող էթիկայի հանձնաժողով ունենալու անհրաժեշտությունը, որն առանց ԱԺ կանոնակարգ օրենքում համապարփակ փոփոխություններ կատարելու հնարավոր չէ իրականացնել: Նստաշրջանի ընթացքում Գագիկ Ծառուկյանի շուրջ ստեղծված իրավիճակում ԱԺ քաղաքական մեծամասնությունը որոշակի քաղաքական ազդակներ հաղորդեց այդ անհրաժեշտության գիտակցման և դրանից բխող՝ օրենսդրական փոփոխություններով հանդես գալու նպատակադրման վերաբերյալ: Խմբակցությունը նախատեսում է առաջիկայում հանդես գալ կոնկրետ օրենսդրական փոփոխությունների նախաձեռնությամբ:

Շահերի բախման ակնառու դրսևորման անտեսումը

Սահմանադրության 95-րդ հոդվածը՝ (պատգամավորական մանդատի անհամատեղելիություն) սահմանում է, որ պատգամավորը չի կարող զբաղեցնել որևէ պաշտոն ...առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Այս սահմանափակման խախտումը Սահմանադրությունը դիտում է որպես պատգամավորի լիազորությունների դադարեցման հիմք, որը, ըստ ԱԺ կանոնակարգ օրենքի, իրականացվում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից Ազգային ժողովին խախտուժն արձանագրող եզրակացություն ներկայացվելու, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության համար քրեական, վարչական պատասխանատվության ենթարկվելու դեպքում ԱԺ պատգամավորների 1/5-ի կամ ԱԺ Խորհրդի նախաձեռնությամբ ՍԴ դիմելու և վերջինիս կողմից համապատասխան որոշում կայացվելու ընթացակարգով:

Ինդիրը լուծվում է ֆորմալ ընթացակարգերի ապահովմամբ կամ անհրաժեշտ փաստաթղթերի լրացմամբ որևէ ձեռնարկությունում ունեցած ակտիվները, կամ որոշումների կայացման գործառույթը հավատարմագրային կառավարման հանձնելու, այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոններից հրաժարվելու միջոցով: Այս գործընթացը կարգավորելուն է կոչված «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 2-րդ հոդվածը, որով Սահմանադրության 95-րդ հոդվածով սահմանված անհամատեղելիության պահանջի կատարման մեխանիզմ է դիտարկվում պատգամավորական մանդատն ստանալուց հետո՝ 1 ամսվա ընթացքում անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից դուրս գալը, առևտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնից ազատվելը, առևտրային կազմակերպություններից դուրս գալը կամ դրանց կանոնադրական կապիտալում իր բաժնեմասն ամբողջությամբ հավատարմագրային կառավարման հանձնելը, առևտրային կազմակերպությունում ուրիշի գույքի հավատարմագրային կառավարումից հրաժարվելը, վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի, ազատվելը և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոններից ազատվելը:

Ոլորտը կանոնակարգող ներկայիս օրենսդրությամբ պատգամավորական կարգավիճակից բխող արգելված այդ գործառնությունների փաստացի իրականացումը, առավել ևս անձի կողմից պատգամավորական լիազորություններն իր գործարար, մասնավոր շահերին ծառայեցնելու իրական հանգամանքը պարզելու իրավական որևէ հստակ մեխանիզմ առկա չէ՝ չնայած այն հանգամանքին, որ 2017 թվականի հունիսի 9-ին ԱԺ-ի կողմից ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով այս հանձնաժողովին վերապահվում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց, այդ թվում նաև պատգամավորների՝ իրենց պաշտոնների հետ անհամատեղելիության հարցերով վարույթ հարուցելու և ընթացքը լուծելու իրավասություն: Վարույթը ենթադրում է բացառապես առկա փաստաթղթերի ստուգման և վերլուծման գործողություններ՝ առանց օպերատիվ-հետախուզական միջոցառումների կոմպոնենտի, և երկրորդ, որ ամենակարևորն է՝ չնայած օրենքի ընդունումից անցել է 2 տարի, սակայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ձևավորված չէ, ինչի պատճառով օրենքն ամբողջությամբ ուժի մեջ մտած չէ:

Շահերի բախման իմաստային նեղացման խնդիրը կապված է ձեռնարկատիրական սեփականատեր լինելու, տարբեր ընկերություններում ակտիվներ ունենալու հանգամանքները, անկախ դրանք հավատարմագրային կառավարման հանձնելու իրողությունից, որպես պատգամավորի աչառու, շահագրգիռ անձ չգնահատելու և դա որպես պատգամավորական լիազորությունների կոնկրետ գործիքակազմի օգտագործման շարժառիթները պայմանավորող բաղադրիչ չդիտարկելու իրողության հետ: Ի վերջո ակնհայտ է, որ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելով պայմանավորված՝ ունեցած ակտիվները հավատարմագրային կառավարման հանձնելը պատգամավորին չի կարող համապատասխան ընկերություններին վերաբերող հարցերում մեխանիկորեն դարձնել ոչ շահագրգիռ և անաչառ բարձրաստիճան պաշտոնատար անձի:

Այս իմաստով միջազգային լավագույն փորձը հիմնվում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց, այդ թվում նաև պատգամավորների կողմից նախքան պաշտոնի ստանձնումը և պաշտոնավարման ընթացքում ոչ միայն առկա գույքի և եկամուտների, այլ ընդհանուր շահերի, ունեցած շահադիտական հետաքրքրությունների ինքնակամ հայտարարագրման հայեցակարգի վրա: Վերջինս մեծամասամբ կառուցվում է անձի բարեխղճության, այդ շահերը ազնվորեն բացահայտելու կամարտահայտության վրա, որն ինքնին արդեն էթիկական խնդիր է:

Ազգային ժողովի կանոնակարգը, «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքը, ի դեպ, բավականին աղճատված կերպով, այնուամենայնիվ, պարունակում են այդ կոնցեպցիայի տարրեր՝ նաև որոշակիացնելով պատգամավորի գործողությունները շահերի բախման իրավիճակներում:

«ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պատգամավորական էթիկայի 8 կետից բաղկացած կանոններից երկուսով՝ 4-րդ և 5-րդ կետերով, սահմանում է, որ իր լիազորություններն իրականացնելիս պատգամավորը չպետք է առաջնորդվի իր կամ իր հետ փոխկապակցված անձանց անձնական շահերով և չպետք է օգտագործի պատգամավորի պաշտոնի հեղինակությունն ի շահ իրեն կամ այլ անձի: Իսկ նույն օրենքի 4-րդ հոդվածով, որը կոչված է բացահայտելու և սահմանելու պատգամավորի իրավիճակային շահերի բախումը, նշվում է, որ պատգամավորի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալը, Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագիծ ներկայացնելը, Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկ ներկայացնելը, ինչպես նաև Ազգային ժողովի կամ նրա հանձնաժողովի նիստում ելույթ ունենալը, հարցեր տալը կամ քվեարկությանը մասնակցելը:

Նման իրավիճակներում նշված օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ պատգամավորը պարտավոր է Ազգային ժողովի կամ իր անդամակցած հանձնաժողովի նիստում ելույթից կամ քվեարկությունից առաջ հանդես գալ շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ, իսկ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալիս, Ազգային ժողովի որոշման, հայտարարության, ուղերձի նախագիծ ներկայացնելիս, Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկ ներկայացնելիս համապատասխան փաստաթղթերի հետ ներկայացնել շահերի բախման վերաբերյալ իր գրավոր հայտարարությունը՝ նկարագրելով շահերի բնույթը: Ընդ որում՝ այս պահանջը ենթադրում է համապատասխան հարցի քվեարկությանը շահերի բախման խնդիր ունեցող պատգամավորի մասնակցության բացառում՝ հաշվի առնելով, որ ըստ նույն օրենքի «հոդված 4-րդ, 4-րդ մաս» շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու դեպքում հարցի քվեարկությունից պատգամավորի բացակայությունը համարվում է հարգելի:

Սակայն ուշագրավ է այն հանգամանքը, որ շահերի բախման խնդիր ունենալու դեպքում ԱԺ լիազումար նիստում կամ ԱԺ հանձնաժողովի նիստում ելույթ ունենալու պայմանը ԱԺ կանոնակարգ-օրենքում ոչ թե պարտադիր բնույթ է կրում, այլ հայեցողական: Մասնավորապես Կանոնակարգի 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսվում է, որ պատգամավորի շահերի բախման վերաբերյալ հայտարարությունը նիստի վարման կարգի շրջանակներում է, որը նա կարող է անել 1 անգամ՝ քվեարկությունից անմիջապես առաջ:

Այս իմաստով պատգամավորների գործունեությունը կանոնակարգող վերոնշյալ երկու օրենքներում առկա է որոշակի հակասություն: Սակայն քանի որ ԱԺ կանոնակարգն ունի սահմանադրական օրենքի կարգավիճակ, դրա իրավանորմերն առաջնային են: Յետևաբար, պետք է համարել, որ տվյալ պահին նման հայտարարությամբ հանդես գալը առավելապես ոչ թե պարտադիր կատարման ենթակա, այլ միայն պատգամավորների ցանկությանը թողնված գործողություն է:

Բացի վերոնշյալը, երկու օրենքներից ոչ մեկով հստակ չեն կարգավորվում շահերի ակնհայտ բախման դեպքում պատգամավորի կողմից հայտարարությամբ հանդես չգալու, կամ քվերակությանը նրա մասնակցությունից հետո շահերի բախման մասին ակնհայտ փաստերի առկայության բացահայտման դեպքում հնարավոր իրավական հետևանքները, պատասխանատվության մեխանիզմները: Այս իմաստով ևս իրավակարգավորումը առավելապես ձևական բնույթ է կրում:

ԱԺ 7-րդ գումարման 2-րդ ստաշրջանը աննախադեպ կարելի է համարել հատկապես շահերի բախման երևույթի իրավական ոչ ամբողջական նկարագրության, կարգավորումների անլիարժեքության նշված խնդիրների կոնկրետ դրսևորմամբ, որը փաստեց այս ինստիտուտի չկայացվածությունը: Այն դրսևորվեց ներմուծվող ցեմենտի համար պետական տուրքի սահմանմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթի շուրջ խորհրդարանական քննարկումների և քվեարկության ընթացքում ԲՀԿ խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանի գործողությունների համատեքստում:

Օրենսդրական փաթեթն ուղղակիորեն առնչվում էր ցեմենտ արտադրող տեղական ընկերությունների տնտեսվարական շահերին, իսկ Յայաստանում ամենախոշոր նման ընկերություններից մեկի՝ «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի 100 տոկոս բաժնեմասերի սեփականատերը հանդիսանում է հենց Գագիկ Ծառուկյանը:

Չանդես գալով ներկրվող ցեմենտից բացի, նաև տեղում արտադրվող ցեմենտի հիմնական հումքային ռեսուրս համարվող կլինկերի ներկրման համար պետական տուրք սահմանելու դիրքերից՝ ԲՀԿ-ն փաստացի, կամա թե ակամա, հայտնվել էր «Արարատցեմենտ»-ի և այդ չափով հենց վերջինիս սեփականատերը հանդիսացող Գագիկ Ծառուկյանի տնտեսական շահերը պաշտպանող խմբակցության դերում: Ընդ որում՝ ցանկալի օրենսդրական լուծումներն ստանալու նպատակով, փաստացի որպես լոբիսգի միջոց, կիրառվում էր ընկերության աշխատակիցների պահանջները բարձրացնելու տեխնոլոգիան, որը զուգահեռվում էր օրենսդրական փաթեթի նախնական կարգավորումներն ընդունելու սոցիալական բացասական հետևանքների վրա շեշտադրում կատարելով:

Օրենսդրական փաթեթի առաջին ընթերցմամբ քննարկման ռեժիմում ԲՀԿ-ն և անձամբ Գագիկ Ծառուկյանը մասնակցել են քվեարկությանը և դեմ հանդես եկել, որի հիմքում ընկած էր ոչ թե ինքնին ներկրվող ցեմենտի համար պետական տուրք սահմանելուն դեմ լինելու սկզբունքը, այլ նույն մոտեցումը նաև ներկրվող կլինկերի համար չկիրառելու կառավարության՝ իրենց համար մերժելի դիրքորոշումը: Մինչդեռ «դեմ» քվեարկելը խմբակցության կողմից առավելապես ներկայացվել է իբրև շահերի բախման առկայությունը բացառելու գործնական դրսևորում:

Որպես հարցի քննարկման շրջանակներում իր վարքագծի վերաբերյալ քննադատություններին, ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվելու սահմանափակումը խախտելուն ուղղված մեղադրանքների հիմնական կամ գործնականում միակ հակափաստարկ՝ Ծառուկյանը վկայակոչել է «Արարատցեմենտ» ՓԲԸ-ն իր կողմից հավատարմագրային կառավարման հանձնած լինելու իրողությունը:

Մինչդեռ «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 4-րդ հոդվածի իմաստով դա չի կարող շահերի բախման իրավիճակի բացառման հիմք և եղանակ հանդիսանալ: Որովհետև պատգամավորի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը ոչ թե հավատարմագրային կառավարման հանձնած լինելու պահանջի կատարման հետ է կապվում, ալ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու, ԱԺ որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագիծ ներկայացնելու, շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկ ներկայացնելու, ինչպես նաև ԱԺ-ի կամ նրա հանձնաժողովի նիստում ելույթ ունենալու, հարցեր տալու կամ քվեարկությանը մասնակցելու պատգամավորական լիազորություններն իրականացնելով իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրությունը բարելավելուն, իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրությունը բարելավելուն նպաստելու հանգամանքն ի սկզբանե պատգամավորի կողմից գիտակցման: Այսինքն՝ անկախ «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի կառավարումը հավատարմագրման հանձնելու հանգամանքից, միայն այն գիտակցումը, որ տվյալ հարցի քննարկման շրջանակներում իր պատգամավորական նշված լիազորությունների գործադրումը այսպես թե այնպես ուղղակի առնչվում է իր սեփականությունը հանդիսացող ընկերության գույքային դրությանը և շահերին, Գագիկ Ծառուկյանը փաթեթի առաջին ընթերցման քվեարկությունից, անգամ քննարկումներից առաջ պետք է պաշտոնապես ԱԺ-ում հայտարարեր տվյալ հարցում անձնական շահեր ունենալու մասին և չմասնակցեր քննարկումներին և քվեարկությանը:

Օրենսդրական փաթեթի երկրորդ ընթերցման ռեժիմում Գագիկ Ծառուկյանը չի մասնակցել քվեարկությանը՝ այդպիսով մասամբ գործելով նշված իրավակարգավորումներին համահունչ: Իսկ ԲՀԿ-ն կողմ է քվեարկել՝ բացառապես ցույց տալու համար, որ շահերի բախման խնդիր չկա: Այդ մասին է վկայում հանգամանքը, որ խմբակցությունը կողմ քվեարկելով հանդերձ՝ հայտարարել է, թե հետևանքների ողջ պատասխանատվությունը կրում է իշխանությունը, այսինքն, ուղղակի անտեսելով այն հանգամանքը, որ կողմ քվեարկելով, նաև իրենք են պատասխանատվություն ստանձնում այդ հնարավոր հետևանքների համար:

Այս գործոնները հաշվի առնելով՝ կարելի է եզրակացնել, որ կոնկրետ նշված հարցի շրջանակներում առկա էին Գագիկ Ծառուկյանի գործողությունները պատգամավորական էթիկայի՝ «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի համապատասխան հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված կանոններին համապատասխանության, ինչպես նաև նույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ելույթից կամ քվեարկությունից առաջ շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու պարտավորությունը չկատարվելու հարցերի քննարկման և եզրակացություն տալու համար ԱԺ էթիկայի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու բոլոր նախադրյալներն ու իրավական հիմքերը:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐ

7-րդ գումարման Ազգային ժողովի 132 պատգամավորների մի մասը (86 պատգամավոր) լրացրել է պաշտոնի ստանձնման հայտարարագիր 2019 թվականի հունվարի 14-ի դրությամբ: Մյուս մասը (46 պատգամավոր) լրացրել է 2018 թվականի տարեկան հայտարարագիր, քանի որ մինչև պատգամավոր ընտրվելը ևս զբաղեցրել է պետական պաշտոն:

Այդ հանգամանքով պայմանավորված՝ ԱԺ 132 պատգամավորների դրամական միջոցների և հանձնված փոխառությունների տվյալների համեմատությունը կատարվել է մի մասինը 2018 թվականի վերջի դրությամբ, մյուսինը՝ 2019 թվականի հունվարի 14-ի դրությամբ:

Վերլուծվել են միայն այն պատգամավորների եկամուտները, որոնք լրացրել են 2018-ի տարեկան հայտարարագիր (մյուսները պետք է լրացնեին ընդամենը 2 շաբաթվա ընթացքում՝ 2019 թվականի հունվարի 1-ից 14-ը ստացած եկամուտների տվյալները):


Դրամական միջոցներ

Աժ 7-րդ գումարման բոլոր պատգամավորները միասին հայտարարագրել են 1 մլրդ 905.3 մլն դրամ, 171.6 մլն դոլար և 31.1 մլն եվրո դրամական միջոցներ: Ընդհանուր գումարը դրամային արտահայտությամբ կազմում է շուրջ 102.17 մլրդ դրամ, դոլարային արտահայտությամբ՝ 211.2 մլն ԱՄՆ դոլար:

Դրամական միջոցների մեծ մասը պատկանում է ԲՀԿ խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանին, որը դրամական միջոցները պահում է գլխավորապես դոլարով և եվրոյով: ԲՀԿ առաջնորդը հայտարարագրել է 543.8 մլն դրամ, 168.5 մլն դոլար և 30.6 մլն եվրո: Ծառուկյանի հայտարարագրած դրամական միջոցների ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ կազմում է 99 մլրդ դրամ կամ Աժ բոլոր պատգամավորների հայտարարագրած դրամական միջոցների 97%-ը:

Մնացած 131 պատգամավորները միասին հայտարարագրել են 1 մլրդ 361.5 մլն դրամ, 3 մլն 121 հազար դոլար և 454.2 հազար եվրո: Նրանց հայտարարագրած դրամական միջոցների արժույթային բաշխվածությունն ավելի հավասարակշռված է:

Գրաֆիկ 5. Դրամական միջոցների արժույթային բաշխվածությունը



7-րդ գումարման Աժ պատգամավորները (բացի Ծառուկյանից) իրենց հայտարարագրած դրամական միջոցների 43.6%-ը պահում են ՀՀ դրամով, 48.3%-ը՝ ԱՄՆ դոլարով և 8.1%-ը՝ եվրոյով:

Հայտարարագրված դրամական միջոցների ծավալով Աժ երեք խմբակցություններից առաջինը «Բարգավաճ Հայաստան»-ն է:

88 պատգամավոր ունեցող «ԻՄ Բայրը» խմբակցության ընդհանուր դրամական միջոցները դրամային արտահայտությամբ կազմում են 713 մլն դրամ:

26 հոգանոց «**Բարգավաճ Հայաստան**» խմբակցության հայտարարագրած դրամական միջոցները դրամային արտահայտությամբ կազմում են 101.4 մլրդ դրամ, իսկ առանց Գազիկ Ծառուկյանի հայտարարագրի (աղյուսակում՝ ԲՀԿ-2)՝ 2.3 մլրդ դրամ:

«**Լուսավոր Հայաստան**»-ի հայտարարագրած դրամական միջոցները դրամային արտահայտությամբ կազմում են 115.5 մլն դրամ:

Դրամական միջոցները՝ ըստ խմբակցությունների

ԽՍԲ	ԸՆԴ (դրամ արտահ.) / միջինը	Դրամ	Դոլար	Եվրո	Ռուբլի
ԻՔ	713 մլն դր / 8.2 մլն	386,3 մլն	523,1 հազ	130,4 հազ	200 հազ
ԲՀԿ	101 մլրդ 436.3 մլն / 3.9 մլրդ	1 մլրդ 460.4 մլն	171 մլն	30.9 մլն	1.9 մլն
ԲՀԿ-2	2 մլրդ 311.2 մլն / 92.4 մլն	916 մլն 575.7 հազ	2 մլն 511.1 հազ	301.3 հազ	1.9 մլն
ԼՀԿ	115.5 մլն / 6.4 մլն	58.6 մլն	86.8 հազ	22.5 հազ	353 հազ

«**Իմ քայլը**» խմբակցությունում յուրաքանչյուր պատգամավորի բաժին է ընկնում միջինը 8.2 մլն դրամ, «**Բարգավաճ Հայաստան**»-ում՝ 3,9 մլրդ դրամ (առանց Ծառուկյանի՝ 92.4 մլն դրամ), և «**Լուսավոր Հայաստան**»-ում՝ 6.4 մլն դրամ:

Ովքեր ամենից շատ փող ունեն

Ի տարբերություն նախորդ՝ 6-րդ գումարման Ազգային ժողովի, որտեղ կար 12 դոլարային միլիոնատեր, 7-րդ գումարման ԱԺ-ում դոլարային միլիոնատեր պատգամավորները 2-ն են, երկուսն էլ ԲՀԿ-ից:

132 պատգամավորներից միայն Գազիկ Ծառուկյանի (ԲՀԿ) և Դավիթ Մանուկյանի (ԲՀԿ) հայտարարագրած դրամական միջոցների ծավալն է դոլարային արտահայտությամբ գերազանցում 1 մլն դոլարը:

Դրամական միջոցներ

ID	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ԽՅԿ	Ընդհանուր դրամով	Ընդհանուր դոլարով	Դրամ	Դոլար	Եվրո	Ռուբլի
1	Ճառուկյան Գագիկ Կոլյայի	ԲՀԿ	99 035 105 900,0	204 723 733,1	543 845 000,0	168 531 000,0	30 641 000,0	0,0
2	Մանուկյան Դավիթ Անդրանիկի	ԲՀԿ	979 708 250,0	2 025 236,7	268 595 750,0	1 470 000,0	0,0	0,0
3	Բաբայան Էդուարդ Վլադիմիրի	ԲՀԿ	358 106 288,5	740 271,4	101 235 000,0	400 530,0	100 540,0	1 069 000,0
4	Գրիգորյան Արթուր Գրիշայի	ԲՀԿ	294 537 000,0	608 862,0	150 000 000,0	150 000,0	130 000,0	0,0
5	Կարապետյան Տիգրան Գոռի	ԻԲ	214 262 500,0	442 919,9	103 000 000,0	230 000,0	0,0	0,0
6	Բազրատյան Սերգեյ Պապաշի	ԲՀԿ	150 000 000,0	310 077,5	150 000 000,0	0,0	0,0	0,0
7	Մելքումյան Միքայել Սերգեյի	ԲՀԿ	137 031 250,0	283 268,7	4 000 000,0	275 000,0	0,0	0,0
8	Մաղաթյան Հրանտ Ռոբերտի	ԲՀԿ	83 000 000,0	171 576,2	83 000 000,0	0,0	0,0	0,0
9	Ստեփանյան Տիգրան Վաչիկի	ԲՀԿ	63 000 000,0	130 232,6	63 000 000,0	0,0	0,0	0,0
10	Գրիգորյան Վարդան Ֆաբրիցուսկի	ԲՀԿ	62 353 175,0	128 895,5	34 330 000,0	38 700,0	17 000,0	0,0

Ճառուկյանի հայտարարագրած ընդհանուր դրամական միջոցները դոլարային արտահայտությամբ կազմում են շուրջ 205 մլն դոլար: Նրան հաջորդում է ԲՀԿ-ական Դավիթ Մանուկյանը, որի հայտարարագրած ընդհանուր դրամական միջոցները դոլարային արտահայտությամբ գերազանցում են 2 մլն դոլարը (268.6 մլն դրամ և 1 մլն 470 հազար դոլար):

Ամենից շատ դրամական միջոցներ հայտարարագրած պատգամավորների տասնյակում երրորդը Էդուարդ Բաբայանն է՝ Ճառուկյանի թիկնազորի նախկին պետը: Նա հայտարարագրել է ընդհանուր առմամբ 740 հազար դոլարին համարժեք դրամական միջոցներ:

Ուշագրավ է, որ ամենից շատ դրամական միջոցներ հայտարարագրած 10 պատգամավորներից 9-ը ԲՀԿ անդամ են, և միայն մեկն է «Իմ քայլը» խմբակցությունից՝ Տիգրան Կարապետյանը: Սյունիքի մարզից ռեյտինգային կարգով ընտրված Կարապետյանը նախկին գործարար է և հայտարարագրել է 443 հազար դոլարին համարժեք դրամական միջոցներ:

132 պատգամավորներից 48-ը դրամական միջոցներ չեն հայտարարագրել կամ հայտարարագրել են զրո դրամ (դրամական միջոցներ չունեն):

Փոխառություններ

Փոխառությունների մեջ մտնում են ինչպես պաշտոնյաների կողմից պարտքով տրված գումարները (ֆիզիկական և իրավաբանական անձանց), այնպես էլ բանկում ներդրված ժամկետային ավանդները:

Ըստ հայտարարագրերի՝ 2019 թվականի սկզբի դրությամբ 132 պատգամավորներից 20-ն են ունեցել տարբեր արժույթներով հանձնած փոխառություններ:

Հանձնած փոխառությունները հայտարարագրած պատգամավորների ցանկը

ԱՆՈՒՆ ԱՉԳԱՆՈՒՆ	ԽՄԲ	Ընդհանուր դրամով	Ընդհանուր դոլարով	Դրամ	Դոլար	Եվրո	Ռուբլի
Ճառուկյան Գագիկ Կոյայի	ԲՅԿ	66 753 145 948,3	137 990 999,4	31 010 071 859,0	31 738 128,0	34 077 142,0	218 500 000,0
Գրիգորյան Արթուր Գրիշայի	ԲՅԿ	140 000 000,0	289 405,7	140 000 000,0	0,0	0,0	0
Մկրտչյան Կորյուն Լեոնի	ԻՔ	101 614 207,5	210 055,2	0,0	94 690,0	100 800,0	0
Իգիթյան Հովհաննես Հենգիկի	ԻՔ	88 472 000,0	182 877,9	38 000 000,0	70 000,0	30 000,0	0
Զուլֆալյանյան Արսե Լեոնի	ԻՔ	51 375 000,0	106 201,6	3 000 000,0	100 000,0	0,0	0
Դանիելյան Համազասպ Գրիգորի	ԻՔ	41 653 112,5	86 104,6	3 490 000,0	50 850,0	24 500,0	0
Խաչատրյան Արկաղի Սանասարի	ԼՅԿ	40 202 732,1	83 106,4	35 365 232,1	10 000,0	0,0	0
Չոհրաբյան Նաիրա Վահանի	ԲՅԿ	39 538 087,2	81 732,5	0,0	81 732,5	0,0	0
Մանուկյան Արտակ Չուբարի	ԻՔ	16 931 250,0	35 000,0	0,0	35 000,0	0,0	0
Այվազյան Հրանտ Գևուհու	ԼՅԿ	16 593 475,0	34 301,8	2 110 000,0	29 940,0	0,0	0
Տիգրանյան Հերիբենազ Սարգսի	ԻՔ	10 089 888,0	20 857,6	10 089 888,0	0,0	0,0	0
Սանդիկով Ալեքսեյ Իվանի	ԻՔ	9 406 300,0	19 444,5	9 406 300,0	0,0	0,0	0
Ավետիսյան Ալեքսանդր Մելսիկի	ԻՔ	7 000 000,0	14 470,3	7 000 000,0	0,0	0,0	0
Վարդանյան Վարդան Նահապետի	ԲՅԿ	5 050 350,0	10 440,0	0,0	10 440,0	0,0	0
Մելքունյան Միքայել Սերգեյի	ԲՅԿ	4 837 500,0	10 000,0	0,0	10 000,0	0,0	0
Պապոյան Գեորգ Հարությունի	ԻՔ	4 828 125,0	9 980,6	1 200 000,0	7 500,0	0,0	0
Զուլիանյան Արուսյակ Թովմասի	ԻՔ	3 100 000,0	6 408,3	3 100 000,0	0,0	0,0	0
Եղիազարյան Արմեն Էդիկի	ԼՅԿ	2 500 000,0	5 168,0	2 500 000,0	0,0	0,0	0
Կարապետյան Աննա Սամվելի	ԻՔ	1 693 125,0	3 500,0	0,0	3 500,0	0,0	0
Դավոյան Արփիլես Հրահատի	ԻՔ	394 676,0	815,9	394 676,0	0,0	0,0	0

Հանձնած փոխառությունների ծավալով նույնպես առաջինը ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանն է. նա հայտարարագրել է 31 մլրդ դրամի, 31.7 մլն դոլարի, 34 մլն եվրոյի և 218.5 մլն ռուբլու հանձնած փոխառություններ: Ծառուկյանի հանձնած փոխառությունների ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ կազմում է 66.7 մլրդ դրամ, դոլարային արտահայտությամբ՝ 138 մլն դոլար:


Հաջորդ խոշոր փոխատուն կրկին ԲՀԿ խմբակցությունից է՝ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախկին նախարար Արթուր Գրիգորյանը: Նա հայտարարագրել է 140 մլն դրամի փոխառություն (ամբողջը՝ ՀՀ դրամով):

Երրորդը «ԻՄ քայլը» խմբակցության անդամ Կորյուն Սկրտչյանն է, որի հանձնած փոխառությունների ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ կազմում է 101.6 մլն դրամ: Ընդ որում, Սկրտչյանը դրամով փոխառություններ չունի. նա իր գումարները պարտքով տվել է դոլարով և եվրոյով:

Ամենից շատ փոխառություններ տված պատգամավորների թվում են նաև Հովհաննես Իգիթյանը (ԻՔ), Արսեն Ջուլֆալակյանը (ԻՔ), Համազասպ Դանիելյանը (ԻՔ), Արկադի Խաչատրյանը (ԼՀԿ) և այլք:

Ընդհանուր առմամբ, բոլոր 20 պատգամավորները միասին, որպես փոխառություն, հայտարարագրել են 67 մլրդ 338.4 մլն դրամին կամ 139.2 մլն դոլարին համարժեք գումար:

Գրաֆիկ 6. Հանձնած փոխառությունների արժույթային կառուցվածքը



ՀՀ դրամով հանձնված փոխառությունների կշիռը 46.4% է (31.2 մլրդ դրամ), դոլարով հանձնած փոխառությունների կշիռը 23.2% (32.2 մլն դոլար), եվրոյով հանձնած փոխառությունների կշիռը 28.1% (34.2 մլն եվրո), ռուբլով հանձնած փոխառությունների կշիռը 2.3% (218.5 մլն ռուբլի):

Եկամուտներ

7-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավորների եկամուտների ընդհանուր համեմատական անցկացնել հնարավոր չէ, քանի որ նրանց մի մասը (86) ներկայացրել են պաշտոնը ստանձնելու հայտարարագիր՝ 2019 թվականի հունվարի 1-ից հունվարի 14-ն ընկած ժամանակահատվածում ստացած եկամուտներով, իսկ մյուս մասը (46) ներկայացրել են 2018 թվականի տարեկան հայտարարագիր՝ նախորդ տարվա ընթացքում ստացած եկամուտներով:

Ժամկետների առումով այդ տվյալները համադրելի չեն, ուստի պաշտոնը ստանձնելու պահին ներկայացված 86 և տարվա կտրվածքով լրացված 46 հայտարարագրերի եկամուտների վերլուծությունը ներկայացնում ենք առանձին:

Առաջին անգամ հայտարարագիր լրացնողների եկամուտը

Աժ 132 պատգամավորներից 86-ը լրացրել են պաշտոնը ստանձնելու հայտարարագիր: 2019 թվականի հունվարի 1-ից 14-ը նրանք ընդհանուր առմամբ ստացել են շուրջ 16.2 մլն դրամին համարժեք եկամուտ: Դրա մեծ մասը՝ 13.9 մլն դրամը (86%-ը), ՀՀ դրամով է, մնացածը՝ արտարժույթով (հիմնականում դոլարով):

Ընթացիկ տարվա առաջին երկու շաբաթների ընթացքում ամենից շատ եկամուտ ունեցել են ԻԶ խմբակցության անդամ Նարեկ Չեյնայանը և ԼՀԿ անդամ Կարեն Սիմոնյանը:

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ԽՄԲ	Ընդհանուր դրամով
Չեյնայան Նարեկ Արտավազի	ԻԶ	2 922 253,8
Սիմոնյան Կարեն Մանվելի	ԼՀԿ	2 771 790,0
Կարապետյան Աննա Սամվելի	ԻԶ	1 585 108,0
Պողոսյան Զրիստինե Ատոմի	ԻԶ	824 996,0
Հակոբյան Վաղարշակ Սոսի	ԻԶ	780 000,0
Զուլֆալայան Արսեն Լեոնի	ԻԶ	772 800,0
Մանուկյան Արտակ Զուբարի	ԻԶ	736 420,0
Ղազարյան Սոնա Արայի	ԻԶ	560 000,0
Դանելյան Համազասպ Գրիգորի	ԻԶ	439 110,0
Սամսոնյան Անի Տաճատի	ԼՀԿ	375 000,0

Նարեկ Չեյնայանը 2019 թվականի հունվարի 1-ից 14-ը ստացել է շուրջ 2.92 մլն դրամին համարժեք եկամուտ, մեծ մասը՝ 2.85 մլն-ը, շահաբաժին է:

Կարեն Սիմոնյանի 2.77 մլն դրամի եկամուտից 2.08 մլն դրամը ստացված փոխառություն է (վարկ): Կ. Սիմոնյանը ստացել է նաև 437 մլն դրամի նվիրատվություն և 255 հազար դրամ աջիատավարձ:

Անևա Կարապետյանի ստացած 1.58 մլն դրամն ամբողջությամբ աշխատավարձ է:

Նշենք նաև, որ պաշտոնը ստանձնելու հայտարարագիր լրացրած 86 պատգամավորներից 56-ը նշել են, որ տարվա առաջին երկու շաբաթների ընթացքում եկամուտ չեն ստացել:

Տարեկան հայտարարագիր լրացրածներ


Աժ 7-րդ գումարման 132 պատգամավորներից 46-ը լրացրել են 2018 թվականի տարեկան հայտարարագրեր: Այսինքն՝ հայտարարագրել են ամբողջ տարվա եկամուտը՝ ըստ ծագման աղբյուրների և արժույթի:

46 պատգամավորները միասին 2018 թվականին ունեցել են 5.2 մլրդ դրամին համարժեք եկամուտ: Այդ 5.2 մլրդից ավելի քան 4.7 մլրդ դրամը պատկանում է Գագիկ Ծառուկյանին: Սա նշանակում է, որ եթե 46 պատգամավորների եկամուտները վերլուծենք ըստ ծագման աղբյուրների և արժույթի, կունենանք հիմնականում Գ. Ծառուկյանի եկամուտների պատկերը: Այս պատճառով նրա եկամուտների պատկերը կներկայացնենք առանձին, մյուս 45 պատգամավորների եկամուտների միասնական պատկերը՝ առանձին

Գագիկ Ծառուկյան, ԲՀԿ խմբակցության ղեկավար

2018 թվականի ընթացքում, համաձայն հայտարարագրի, ունեցել է 4 մլրդ 474.4 մլն դրամին համարժեք եկամուտ: Պատգամավորի եկամուտների մեծ մասը՝ 3.1 մլրդ դրամը (ընդհանուր եկամուտների 65.5%-ը) ստացվել է շահաբաժիններից:

Գրաֆիկ 7. Գագիկ Ծառուկյանի եկամուտների կառուցվածքը



Հաջորդ խոշոր աղբյուրը տրված փոխառությունների դիմաց ստացված տոկոսներն են կամ հատուցումը: 2018 թվականի վերջի դրությամբ Գ. Ծառուկյանն ունեցել է 66.7 մլրդ դրամի հանձնած փոխառություններ, որոնց դիմաց ստացել է 1.47 մլրդ դրամի տոկոսավճար:

Գազիկ Ծառուկյանի եկամուտների 89%-ը (4 մլրդ 184.6 մլն դրամ) ՀՀ դրամով են, մնացածը՝ արտարժույթով:


Տարեկան հայտարարագիր լրացրած 45 պատգամավորների եկամուտները (առանց Գազիկ Ծառուկյանի)

2018 թվականին տարեկան հայտարարագիր ներկայացրած 45 պատգամավորները միասին 2018 թվականի ընթացքում ունեցել են 461 մլն դրամին համարժեք եկամուտ: Այդ եկամուտները գրեթե ամբողջությամբ (99%-ը) ՀՀ դրամով են:

Եկամուտների խոշորագույն աղբյուրը աշխատավարձն է և դրան հավասարեցված վճարումները:

2018 թվականին այս 45 պատգամավորները ստացել են 290 մլն դրամի աշխատավարձ, որը ընդհանուր եկամուտների 63%-ն է:

Գրաֆիկ 8. Պատգամավորների եկամուտների կառուցվածքը



Հաջորդ խոշոր աղբյուրը ստացված փոխառություններն են (վարկերը)։ 2018 թվականի ընթացքում տարեկան հայտարարագիր լրացրած 45 պատգամավորները միասին ստացել են 55.8 մլն դրամի փոխառություններ։


55.8 մլն դրամից 34.8 մլն դրամը Արարատ Միրզոյանին և ԱԺ նախագիդ վարկ է ստացել։

Խոշոր փոխառություններ ստացածների թվում են նաև ԻԶ խմբակցության անդամներ Ջովհաննես Ջովհաննիսյանը (10.8 մլն դրամ) և Կարեն Սարուխանյանը (8.9 մլն դրամ)։

Եկամուտների երրորդ խոշոր աղբյուրը շահաբաժիններն են՝ 55.8 մլն դրամ կամ ընդհանուր եկամուտների 12.1%-ը։ Շահաբաժին ստացել են 2 պատգամավոր՝ ԲՀԿ անդամ Դավիթ Մանուկյանը՝ 55.76 մլն դրամ և Հրանտ Մադաթյանը՝ 40 հազար դրամ։

Պատգամավորները եկամուտներ են ստացել նաև ձեռնարկատիրական գործունեությունից (17.2 մլն դրամ), գույքը օտարելուց (23.1 մլն դրամ) և այլն։

Գրաֆիկ 9. Եկամուտների բաշխվածությունը՝ ըստ խմբակցությունների



Այս պատկերը փոխվում է, երբ հաշվարկում ենք յուրաքանչյուր խմբակցության մեկ պատգամավորի միջին եկամտի չափը։ Այս դեպքում առաջատարը «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունն է, որի 1 պատգամավորին միջինը հասնում է 11.5 մլն դրամ, ԻԶ-ում այդ ցուցանիշը 9.7 մլն դրամ է, ԼՀԿ-ում՝ 8.7 մլն դրամ։

